

Յունաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարները՝ ձորձ Փափանտրեւո եւ Իսմայիլ ձէմ, յառաջիկայ շաբաթ միասնաբար պիտի այցելեն Իսրայէլ, պաղեստինեւիսրայէլեան արիւնալի տագնապին լուծում մը գտնելու փորձով մը:

Կը նախատեսուի, որ ձէմ եւ Փափանտրեւո հանդիպումներ ունենան պաղեստինեան իշխանութեան ղեկավար Եասէր Արաֆատի, Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի եւ արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէսի հետ:

«Եթէ արտակարգ բան չպատահի, ձէմ եւ Փափանտրեւո միասնաբար պիտի այցելեն Իսրայէլ», յայտնեց թրքական աղբիւր մը:

ԺԵՆԻՆԻ ԶԱՐԴԻՆ ՇՈՒՐԸ

ՊԷՅՐՈՒԹ ՊԱՀԱՆՉԵՑ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՔՆՆԻՉ ԶԱՆՉՆԱԽՈՒՄԲ ՄԸ



Զօր. Լահուտ կ'ընդունի քանադական պատուիրակութիւնը:

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ արարական վեհաժողովի նախագահի հանգամանքով ՄԱԿի մէջ Լիբանանի դեսպանին միջոցաւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանէն պաշտօնապէս պահանջեց կազմել ՄԱԿի հովանաւորութեամբ միջազգային քննիչ յանձնախումբ մը, հետաքննութիւն կատարելու ժեճին գաղթականներն եւ վերջերս գրաւուած պաղեստինեան շրջաններէ ներս իսրայէլեան բանակի գործած ջարդերուն շուրջ:

Ան արտաքին գործոց նախարարութեան թելադրեց նման պահանջ ներկայացնել Միջազգային Կարմիր խաչին:

ԱՅՅԵԼՈՒՆԵՐ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց Քանադայի դեսպան Զայլ Սարաֆեանը, որ կ'ընկերակցէ իրանանեան եւ քանադական կրթական հաստատութիւններու պատուիրակութեան: Անիկա ներկայացուց կրթական գործակցութեան իր ծրագիրը:

Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց կուրճ քի հիւանդութեանց նուիրուած իրանանեւֆրանսական բժշկական խորհրդակցողովին մասնակցողներու պատուիրակութիւնը, ինչպէս նաեւ ոստիկան ուժերու հրամանատար զօր. Սայիտ Իտր:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԱԻ ՊԷՅՐՈՒԹ



Հարիւրի կը տեսակցի Միացեալ Նահանգներու ուժաւորութիւնի նախարարին հետ:

Վարչապետ Ռաֆիք Հարիւրի երէկ կէսօրէ ետք Ուաշինգթոնէն վերադարձաւ Պէյրութ: Վարչապետին հետ վերադարձան ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիմիոն, տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Պասէլ Ֆիլիպան եւ Կեդրոնական Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթըն Պէթլը:

Միացեալ Նահանգներու ետօրեայ իր պաշտօնական շարք՝ էջ 10

ԺԵՆԻՆԻ ԳԱՂՔԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ ՊԱՏԱՇԱԾ ԶԱՐԴՆ ՈՒ ԱԻԵՐԸ՝ ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ

Իսրայէլեան բանակը երէկ ամբողջութեամբ պարագծ ժեճին գաղթականներ՝ վայն աւերուած ու քանդուած յանձնելով պաղեստինցիներուն եւ մարդասիրական կազմակերպութիւններուն, որոնց ներկայացուցիչները բառ չեն գտներ նկարագրելու գաղթականներին վիճակը:

Ժեճին բնակիչները կը շարունակեն փնտրուիլ փյտակներուն մէջ, յուսալով, որ ողջ հարապատներ պիտի գտնեն: Մարդասիրական կազմակերպութիւններու գործիչները իրենց կարգին կը փորձեն օժանդակել անոնուն մնացած բնակիչներուն: Գաղթականները այցելուները կ'ըսեն, որ կարգ մը շրջաններու մէջ բնակարաններու հետքն անգամ չէ մնացած եւ թէ փյտակներուն մէջ կը գտնուին անդամաւատուած նեխած ինակներ, որոնք գարշելի հոտ մը կը տարա-



Պաղեստինցի երիտասարդներ, որոնք ազատ արձակուած են Նապլուսի մէջ իսրայէլեան բանակից կողմէ:

ծեն: Մարդասիրական կազմակերպութիւնները կը շարունակեն քննադատել Իսրայէլը, որ օրերով արգիլած էր իրենց մուտքը՝ գաղթականները փնտրուական փակ շրջան մը յայտարարելով: Միջազգային Կարմիր խաչը ժեճին մէջ գրասենակ մը հաստատած է կորսուած նկատուած

բնակիչները գտնելու համար: Կազմակերպութիւնը նաեւ ստանձնած է գաղթականներին շուր հայրաքաղաքները պարտականութիւնը:

ԵՆԻՆԵՐՈՒՄ, իր կարգին, յայտնեց, որ գաղթականներին մէջ իրմնայատակ քանդուած են մտաւորապէս 450 բնակարան-

ներ: Պաղեստինցի բնտաններուն անհիւստի միջին թիւը եօթն է: Իսրայէլեան ներխուժումէն առաջ, ժեճին գաղթականներին մէջ կ'ապրէր 13 հազար պաղեստինցի:

Այլ կ'ատեսան եր յայտնեցին, որ իսրայէլեան բնակիչն հեռացումէն քանի մը

ժամ ետք, իրասպիւրը կանգ առին ժեճինը շրջապատող բլուրի մը վրայ, ուրկէ կրակ բացին անցորդներու վրայ, որոնք քաղաքէն դուրս գալով մօտակայ գիւղերը կ'ուղղուէին: Կրակոցը պատճառ դարձաւ, որ անոնք դէպի ժեճին նահանջեն:

Պաշտօնական ու հիւանդանոցային աղբիւրներ կը նախատեսեն, որ ժեճինի գոհեցումները բարձրանայ չորս հարիւրի, թէեւ տակաւին յստակ պատկեր մը չկայ: ՄԱԿի մասնաւոր պատուիրակ Թերի Ռոտ Լարսըն իսիստ ոճով քննադատեց Իսրայէլը, ղիտել տալով որ անիկա հաւաքական տառապանքի ենթարկած է քաղաքայինները: Իսրայէլեան բանակը կը պնդէ, թէ առաւելագոյնը կատարած է կանխարգիլելու համար քաղաքայիններու սպանութիւնը: Բանակը կը շեշտէ նաեւ, թէ ժեճինի գաղթականները քանի մը

Շարք՝ էջ 10

ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱՄՈՉԵԼ ՊԷՅՐՈՒԹՆ ՈՒ ԴԱՄԱՍԿՈՍԸ

Եւրոպական Յանձնաժողովի բանբեր Կիւնըր Ուիլքընս երէկ յայտնեց, որ Պէյրութի եւ Դամասկոսի

կոսի մօտ կը կատարուին շփումներ բարձրագոյն մակարդակի վրայ, համոզելու համար Լիբանանի

ու Սուրիան, որ պայքարի չենթարկեն 22էն 23 Ապրիլին Սպանիոյ վաշենսիա քաղաքին մէջ Ե. Միութեան եւ Միջերկրական երկիրներու արտաքին գործոց նախարարներու ժողովը:

Պէյրութ եւ Դամասկոս կը պահանջեն, որ ժողովէն դուրս դուրս իսրայէլ, պաղեստինեան շրջաններուն մէջ անոր կատարած վայրագութիւններուն համար: Եւրոպա - միջերկրական շարք՝ էջ 10

ԵՐՐՈՊԱԿԱՆ ԱՐԱԳ ՀԱՎԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒՇԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱԹԷՆՔ - ԱՆԳԱՐԱ ԲԱՆԱՎԷՃԸ ՊԷՏՔ Է ԼՈՒԾՈՒԻ Կ'ՆՍԵՆ ՍՈՒՆԱ

Եւրոպական Միութիւնը կոչ ուղղեց Յունաստանի՝ լուծելու թուրքիոյ հետ իր վէճը՝ Ե. Միութեան արագ հակադարձութեան ուժին գծով, որպէսզի կարելի ըլլայ ձեռնարկել խաղաղարար առաջին առաքելութեան Պալքանեան թերակղզիին մէջ:

Սոլանա ըսաւ, որ Աթէնք մէկ ամիս պայմանաժամ ունի վէճը լուծելու համար: Շարք՝ էջ 10

ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ Ա. Մ. ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան պաշտօնական այցելութեան մը համար այսօր պիտի մեկնի Արաբական Միացեալ Էմիրութիւններ, եւ ապա՝ Քաթար: Ապու Տապիի մէջ կը նախատեսուի նախագահ Քոչարեանի հանդիպումը Արաբական Միացեալ Էմիրութիւններու էմիրին հետ: Նախագահը պիտի այցելէ նաեւ Տուպայ եւ Շարժա:

Քաթարի մայրաքաղաք Տոհայի մէջ նախագահ Քոչարեան պիտի տեսակցի գահաժառանգ էմիր Համատ իսալիֆայի, երկրի վարչապետին եւ փոխ վարչապետին հետ:

ՍՕՏ ՕՐԷՆ

ԱՊՐԻԼ 24Ի ՆՈՒԻՐՈՒԱԾ «ԱԶԴԱԿ»Ի ԲԱՅԱՌԻԿԸ

24 ԱՊՐԻԼ 2002

87ամեակ

144 ԷՁ, ՍԱԿ՝ 5000 L.Ո.

ԵՂԵՌՆԻ 87ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Կազմակերպութեամբ՝ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002 թ. երեկոյեան ժամը 9:00ին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Եղեռնի մատրան դիմաց:

ԼՐԱՏՈՒՌԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԵՋ

ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՐԻԱ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիբանանի եւ Սուրիոյ տեղեկատուութեան նախարարները շարքի Արիտի եւ Ասան Օմրան երկու գումարեցին ժողով մը, որուն ընթացքին քննարկեցին անհրաժեշտութիւնը թափ տալու արաբական լրատուութեան աշխատանքներուն, քողագեղծելու համար Իսրայէլի ոճրային քաղաքականութիւնն ու գործած ջարդերը:

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համ-մուտի հետ տեսակցելէ ետք, ամերիկեան ղեկավարները քննարկեցին իրենց հարցերը, որոնք ամերիկեան ղեկավարները քննարկեցին իրենց հարցերը, որոնք ամերիկեան ղեկավարները քննարկեցին իրենց հարցերը:

Կու նախարարութիւններուն միջեւ գործակցութեան համաձայնագիրը կը նախատեսէ երկու երկրներու բոլոր լրատուութեան միջոցներով:

Շար.ը՝ էջ 10

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համ-մուտի հետ տեսակցելէ ետք, ամերիկեան ղեկավարները քննարկեցին իրենց հարցերը, որոնք ամերիկեան ղեկավարները քննարկեցին իրենց հարցերը:

Կու նախարարութիւններուն միջեւ գործակցութեան համաձայնագիրը կը նախատեսէ երկու երկրներու բոլոր լրատուութեան միջոցներով:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԵՆ՝ ԵՐԿՈՒ ՌՈՒՄԲ

Հարաւային Լիբանանի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու բանբեր թիմուր Կոքսէլ երէկ յայտարարեց, որ նախանցեալ գիշեր երկու ուժեր արձակուած են հարաւային Լիբանանէն եւ ինկած սահմանին մօտ՝ Լիբանանեան կողմը գտնուող բլուրի մը վրայ:

Ռուսները արձակուեցան Սուրի չըջանէն, իսկ անոնց պայթած վայրը Ֆիւրիւլի Նաբուրայի կեղրոնատեղիէն երկու քիլոմետր հեռուութեան վրայ կը գտնուի», րաւ աւ:

Միւս կողմէ, արաբական երկիրներու եւ Իսրայէլի միջեւ զինադադարին հսկող միջազգային դէտերու խմբակի պետ գործ. Տօթ եւ Կոլանի մէջ ՄԱԿի խաղաղարար ուժերու հրամանատար գործ. Ռոնֆլոր երէկ իրենց հրամանատարական կազմերու բարձրաստիճան անդամներու եւ օգնականներու հետ այցելեցին Նաբուրա, ուր ժողով մը գումարեցին Ֆիւրիւլի հրամանատար գործ. Լալիթ Թիւրարի եւ Ֆիւրիւլի քաղաքական շարքերու պատասխանատու եւ բանբեր թիմուր Կոքսէլի հետ, քննարկելու համար չըջանային իրավիճակը:

ԿԱՐԳԱՅԷՔ «ՆԱՀԱՐ»ԻՆ ՄԵՋ

«Նահար» օրաթերթի կիրակնօրեայ մշակութային յաւելումն է, այս Կիրակի Հայկական Յեղասպանութեան 87ամեակին առիթով կարդացե՛ք Եւսէֆ Կաթմի հայ մշակոյթի եւ քաղաքացիական ճակատագրի յօդուածը՝ ԲԱՆԱՍԵՂՈՒԹԻՒՆԸ ԽՂՃՄԱՆՔԸ Ե՛ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ:

Միւս կողմէ, արաբական երկիրներու եւ Իսրայէլի միջեւ զինադադարին հսկող միջազգային դէտերու խմբակի պետ գործ. Տօթ եւ Կոլանի մէջ ՄԱԿի խաղաղարար ուժերու հրամանատար գործ. Ռոնֆլոր երէկ իրենց հրամանատարական կազմերու բարձրաստիճան անդամներու եւ օգնականներու հետ այցելեցին Նաբուրա, ուր ժողով մը գումարեցին Ֆիւրիւլի հրամանատար գործ. Լալիթ Թիւրարի եւ Ֆիւրիւլի քաղաքական շարքերու պատասխանատու եւ բանբեր թիմուր Կոքսէլի հետ, քննարկելու համար չըջանային իրավիճակը:

Շար.ը՝ էջ 10

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՋ-ԹԵՄԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՒՄԱՐ ՏԵՐ ԶՕՐԻ ՄԵՋ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Նիթ՝ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄԸ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԵՄԱՆԿԻՒՆԵՆ»

Պատգամաբեր՝ ԳԵՐ. ԺԻՐԱՅՐ ՍՈՂՈՍԵԱՆ

ՄԱՀԱԶԴ

ՊՈՒՐԻՆԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈՂԵԿՈՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈՂԵԿՈՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Հ. Յ. Դ. ԼԵՄ

ՆՈՐԵՆԱԿԱՆԵ

ԿԱՐԵՆ

ՊՈՒՐԻՆԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՈՂԵԿՈՂՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

ՆԱՄԱԿԱՆԻ Սիրելի՛ «Պատիկ-Մատիկ» «Ազգակ»ի, Մանկապատանեկան լաւելուածի խմբագրական կազմ:

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅՈՅՍԵՐՈՒՆ Կ'ԸՍԵ ՅՈՎՆԱՆԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

ՄԱՀԱԶԴ


ՄԱՀԱԶԴ

ՎԱՊԸ՝ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ Ա. ՀԱՆԳՐՈՒՄԸ

ՇԻՐԱՔ ԵՒ ԺՈՍՓԷՆ ԿԸ ԳՐԱՒԵՆ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԵՐԸ

Վաղը՝ Կիրակի, 21 Ապրիլ 2002, Ֆրանսացիք պիտի ուղղուն քուէատուները ընտրելու հրո հանրապետութեան ճրո նախագահը (Խորքին մէջ՝ ճրո, որովհետեւ Տը Կոլ եւ Միթերան երկուքական անգամ ընտրուած են նախագահ), որ այսուհետեւ հինգ տարուան նստաշրջան մը պիտի ունենայ փոխան եօթի:

Կ'ըսեն, թէ անիմաստ է ընտրութիւն կատարել, որովհետեւ թէ՛ աջը, թէ՛ ձախը, ո՛վ որ ալ ընտրուի նախագահ՝ միեւնոյնն է, երկրին ընկերային թէ՛ քաղաքական կեանքէն ոչինչ պիտի փոխուի: Անշուշտ այսպիսի մտածողութիւն դիւրին չ'ընդունուիր Ֆրանսացի ժողովուրդին մօտ, յատկապէս հին սերունդին ազգային մտածողութեան մէջ: Անշուշտ կարելի չէ



Լիոնել ժոսփէ:

նախկին ընտրութիւններու փորձառութիւնը ցոյց տուած է, թէ երկրորդ փուլին ի վերջոյ տեղ մը գէթ ձախակողմեան տարբեր հոսանքի թեկնածուները կը միանան եւ իրենց կու տան ընկերակալական թեկնածուին, մինչ նոյնը չէ պարագան արկղակողմեանը, ուր գէթ ծայրայեղական երկու թեկնածուները՝ Լը Փէն եւ Պրիւնօ Մեկրէ իրենց քուէները չեն շնորհեր Լը Փէ. հրթիռեկնածուին: Արդեօք այս անգամ այս «աւանդութիւնը» եւս կը խախտի: Պատասխանը կու տայ անշուշտ Ֆրանսացի ընտրողը եւ այս մասին շատ աւելի ընդարձակ կարելի է խօսիլ Ա. Հանգրուանի վաղուան ընտրութեանց արդիւնքէն ետք:

Շատ հետաքրքրական է հարցախոյզի Ա. Է. Ա. Հիմնարկի այն տեսութիւնը, ըստ որուն՝ 46 առ

իւրաքանչիւր թեկնածու երկար-բարակ կը ներկայացնէ իր եւ իր կուսակցութեան ծրագիրները յիշեալ հարցերուն գծով, կատարելով խոստումներ, զորս յաճախ անոնք չեն գործադրեր, ըստ՝ Ֆրանսացի քուէարկողին: Անշուշտ, արտաքին աշխարհին ակնոցով՝ այս հարցերուն մէջ կարեւորագոյնը եւրոպայի Միութեան հարցն է: Մէկ եւ հզօր եւրոպայի մը յա-

ԲՈԼՈՐՍ ՀԱՅԱԳՐԳՈՂ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐ

Ֆրանսայի նախագահական ընտրութիւններուն առիթով պարտք կը պահանջ ամբողջ էջ մը յատկացնելու կարելոր այս իրադարձութեան: Հայկական օրաթերթ մը չի կրնար, իրաւունք չունի լայն տեղ չորսմադրելու անոր, հիմնական քանի մը պատճառներով:

Առաջին հերթին, քաղաքական մտածողութիւնը «կը պարտադրէ», որ որեւէ օրաթերթ դիմէ նման նախաձեռնութեան, տրուած ըլլալով, որ Ֆրանսա բոլոր ժամանակներուն, նա՛ է այսօր, կը հանդիսանայ աշխարհի մեծ պետութիւններէն մէկը, քաղաքական, ռազմական, տնտեսական, ճարտարարուեստական, մշակութային, քաղաքակրթական ուսման կենտրոններէն մէկը, հետեւաբար իր ազդեցիկ խօսքը ունի մեր դարասկիզբին նոր ձեւաւորող աշխարհաքաղաքագրական փառքին մէջ:

Երկրորդ, իբրեւ լիբանանցի եւս ունինք հիմնական պատճառներ մեր աչքերը յարելու դէպի Ֆրանսա, ըլլա՛յ որպէս ֆրանսախօս երկիր, ըլլա՛յ որպէս նախկին ֆրանսական գաղութ, մասնաւոր որ մինչեւ օրս լիբանանեւֆրանսական յարաբերութիւնները կը մնան սերտ:

Բնականաբար իբրեւ հայ նաեւ շահագրգռուած ենք Ֆրանսայի անցողիկ-ձեռնարկ, յատկապէս նման կարելոր ու ճակատագրական իրադարձութիւններով: Հաւանաբար պատճառը պատմական մեր դարաւոր յարաբերութիւնն է Ֆրանսայի հետ, որ կու գայ հինէն, տասնմէկերորդ դարերէն, իսկ՝ Կիլիկիան ժամանակաշրջանէն: Անկի ու՛շ տասնիններորդ դարու կէսերուն՝ Ֆրանսայի անժխտելի ազդեցութիւնը պարօծնքի մեր շրջանին վրայ: Յետոյ՝ ընկերավարական մեր ամուր ու սերտ շփումները Ֆրանսայի հետ, հայութեան ու Հայ Դատի ջերմ պաշտպան ժամ ժօրքներուն է ժողովուրդներուն հետ: Իսկ հայութեան համար կենսական նշանակութիւն ունեցող մէկ դաշնագիրը՝ Սեւրի եւս կնքուեցաւ անոր հողին վրայ, մայրաքաղաք Փարիզէն քանի մը քիչմէտք անդին:

Այս բոլորին վրայ աւելցնենք նաեւ Ֆրանսայի մեր գաղութի գոյութիւնը, շուրջ 350,000 հաշուող մեր հայրենակիցները, որոնք կը վայելեն այդ երկրին բոլոր բարիքներն ու իրաւունքները եւ որոնք վաղը պիտի տան նաեւ իրենց քուէները:

Կը մնայ, անշուշտ, կարելորներուն կարելորը: Ֆրանսա հանդիսացաւ դարձեալ առաջին մեծ պետութիւնը, որ անչափ Հայկական Յեղափոխութիւնը, օրէնքի կարգ անցուց անոր անժխտելի իրողութիւնը:

Միայն ինչո՛ւ երախտապարտ ենք Հիւսիսեւրոպայի, Տը Կոլներուն եւ Միթերաններուն երկրին, ահա թէ ինչո՛ւ ամենայն լրջութեամբ կը հետեւինք անոր բոլոր իրադարձութիւններուն:

ժոսփէն: Շիրաք առանձնաբերուանին պիտի ստանայ քուէներուն 20 առ հարիւրը, իսկ ժոսփէն՝ 18 առ հարիւրը եւ անոնք երկուքը պիտի անցնին Բ. Հանգրուան եւ հոն՝ յառաջիկայ 5 Մայիսին պիտի որոշուի յաղթականը: Դարձեալ միշտ ըստ հարցախոյզներուն, որոնք պաշտօնական ու հաստատ տուեալներ չեն անշուշտ, երրորդ դիրքը պիտի գրաւէ ծայրայեղ աջակողմեան ժամ-Մարի Լը Փէն (Ազգային ծախս), որ պիտի ապահովէ քուէներուն 13 առ հարիւրը, իսկ չորրորդ դիրքը պիտի գրաւէ ազգայնական ժամ-Փիեռ Երվենըման, որ իր կարգին կրնայ Լը Փէնի չափ քուէ ստանալ:

Յամենայնդէպս ինչ ալ ըլլան տրուած թիւերը, մէկ բան յստակ է, որ գլխաւոր երկու թեկնածուներն են Շիրաք եւ ժոսփէն, որոնց անմիջապէս կը յաջորդեն Լը Փէն եւ Երվենըման: Ասիկա կը նշանակէ, թէ երկրորդ



ժաք Շիրաք:

ունի շուրջ 9 առ հարիւր հարիւր քուէներուն նկատառելի թիւ: Եթէ ցարդ յստակ չէ, թէ ո՞ր

16 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

- ժաք Շիրաք. - Եր. Փէ. Եր. (Կօլիսթ), 69 տարեկան ԸԳԿԵՐՎԱՐԱԿԱՆ, 64 տարեկան
- Լիոնել ժոսփէ. - Եր. Փէ. Եր. (Կօլիսթ), 69 տարեկան ԸԳԿԵՐՎԱՐԱԿԱՆ, 64 տարեկան
- ժամ-Փիեռ Երվենըման. - Զանգառուցեան Զամար Ծարժում (ազգայնական), 63 տարեկան
- ժամ-Մարի Լը Փէն. - Ազգային Ծախս (ծայրայեղ աջ), 73 տարեկան
- Ֆրանսուա Պայրո. - Ի. Տէ. Է. Ֆ. (Կեդրոնի աջ), 50 տարեկան
- Ալէք Մատրլէ. - Ազատական-դեմոկրատական (ազատական), 56 տարեկան
- Արիէթ Լակիյէ. - Բանուորական Ծարժում (թրոցիսթ), 62 տարեկան
- Զորիսթ Պուրթէ. - Անկախ թեկնածու (կեդրոն)
- Նուէր Մաւէր. - Կանաչներ (կենտրոնի պաշտպան), 53 տարեկան
- Ռոպէր Զիւ. - Զամայնավար, 55 տարեկան
- Զորիսթ Լըփաթ. - Անկախ պահպանողական կենտրոնի պաշտպան
- Զորիսթ Թոպիսթ. - Ծայրայեղ Չափ Կուսակցութիւն
- Պրիւնօ Մեկրէ. - Ազգային Զանգառուցեան Ծարժում (ծայրայեղ աջ), 52 տարեկան
- Տանիէ Կլոքսթէյն. - Աշխատանքային Կուսակցութիւն (թրոցիսթ)
- ժամ Սէն-ժոս. - Բնութեան պաշտպան
- Օլիվիէ Պրոպանտո. - Եղափոխական Զամայնավար Լիկա (թրոցիսթ), 28 տարեկան

լան այս ընտրութիւնները: Նախ՝ թեկնածուներու թիւը. Առաջին անգամ ըլլալով է, որ 16 թեկնածուներ կը ներկայանան ընտրութեանց: 1974ին 12 թեկնածու ներկայացած է, որ օրին մրցանիշ մը նկատուած է: Այսօր այդ մրցանիշը կը կոտորուի ահաւաստի: Երկրորդը այն է, որ ինչպէս ըսինք, առաջին անգամ ըլլալով նախագահ մը պիտի սկսի իշխելու յարաբերաբար «կարճ» ժամանակաշրջան մը՝ 5 տարուան համար: Երրորդ անախընթաց երեւոյթը կրնայ ըլլալ՝ բացակայութեան հարցը, որ խորապէս կը մտահոգէ թեկնածուները: Կ'ակնկալուի, որ մեծ համեմատութեամբ ըլլայ այս անգամ անոնց թիւը: Ըստ հարցախոյզներուն, 40 միլիոն քուէարկուող իրաւունք ունեցող Ֆրանսացիներուն 25-30 տոկոսը կրնայ չներկայանալ քուէատուք: Անոնք

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- Նախագահը կ'ընտրուի ուղղակի ժողովուրդին կողմէ, երկու հանգրուանով:
- 40 միլիոն ֆրանսացիներ ունին քուէարկելու իրաւունք:
- Յարդ նախագահութեան նստաշրջանը 7 տարի էր. այսուհետեւ 5 տարի:
- Քուէներու հաշուարկում. - Քուէները կը համարուին ձեռքով: Առաւօտեան ժամը 8:00էն բացուած քուէատուքները կը փակուին երեկոյեան ժամը 8:00ին: Երկու ժամ ետք՝ 10:00ին, կը սկսին յայտարարուիլ նախնական արդիւնքները:

Հիմնուելի հարցախոյզներուն արդիւնքներուն վրայ եւ ընտրութեանց ետք միայն ճշգրիտ թիւերու վրայ կրնանք կատարել եզրակացութիւններ կամ գնահատականներ: Նոյնն է պարագան թեկնածուներուն տրուած քուէներու համեմատութեան: Ըստ հարցախոյզներուն՝ ժաք Շիրաք շուրջ երկու առ հարիւր տարբերութեամբ պիտի գերազանցէ Լիոնել

հանգրուանին, 14 թեկնածուները, որոնք դուրս պիտի մնան բնափանաբար ընտրապայքարէն, դարձեալ ունին կարեւոր դերակատարութիւն, որ այլ բան չէ, եթէ ոչ համոզել իրենց համակիրները՝ քուէարկելու մէկուկէ մը հարցախոյզներուն արդիւնքները ճիշդ դուրս գան, ժաք Շիրաք 51 առ հարիւրով պիտի վերընտրուի նախագահ երկրորդ փուլին, ժոսփէնի 49 առ հարիւրին դիմաց, սակայն ինչպէս դիտել կու տայ «Լը Մոնտ» օրաթերթը, այս մասին կարելի չէ այժմէն վիճել եւ Բ. Հանգրուանի «դաշնակցութիւններէն» կախեալ է միայն այդ մէկը:

ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

- Բնակչութիւն. - 60 միլիոն:
- Մայրաքաղաք. - Փարիզ, 10 միլիոն բնակչութիւն:
- Լեզու. - Ֆրանսերէն:
- Քրոնք. - Լայիք հանրապետութիւն (մեծամասնութիւն կաթոլիկ):
- Մեծ քաղաքներ. - Մարսէյ (1,5 միլիոն բնակչութիւն), Լիոն (1,5 միլիոն բնակչութիւն), Լիլ (1,1 միլիոն բնակչութիւն), Ռուլու (1 միլիոն բնակչութիւն):
- Տարածութիւն. - 551,602 քառ. քմ.
- Սահմանակիցներ. - Պելճիքա, Լիքսամպուրկ, Գերմանիա, Չուիցերիա, Իտալիա, Սլովակիա:
- Վարչաւե. - Հանրապետութիւն: Գլխաւորը Էկզկապր՝ նախագահ, ապա՝ Մերակոյտի եւ խորհրդարանի նախագահներ, ապա՝ վարչապետ:

Հետաքրքրական է նաեւ ան, որ թեկնածուներուն մէջ կան աջակողմեան եւ ձախակողմեան գրեթէ համահաստատ թիւով թեկնածուներ, սակայն երկու պարագաներուն ալ անոնք ցարդ կը մերժեն ընտրութեան մօտենալ աջի եւ ձախի տրամաբանութեամբ: Այսուհանդերձ

Ֆրանսայի մէջ միշտ ալ վերի-վարդ ճիշդ դուրս եկած են անոնք: 16 թեկնածուներուն մէջ յատկապէս տասներկու «ախակողմեան» թեկնածուներն են իմաստով շատ հաւանաբար այժմէն իսկ լաւ գիտեն իրենց «չափը» եւ որեւէ յոյս չունին բանալի դերակատարութիւն ունե-

նալցածան ջատագով են թէ՛ Շիրաք, թէ՛ ժոսփէն, իսկ դէժ են՝ ժամ-Մարի Լը Փէն, ժամ-Փիեռ Երվենըման, Ռոպէր Զիւ եւ Արիէթ Լակիյէ, որոնք չորսն ալ 1992ին կնքուած Մասսիօրիի ճամաձայնագիրին դէմ էին: Անոնք մինչեւ օրս դէժ կ'արտայայտուին Երոպայի միացման գաղափարին, մէկ զրամանիչ ունենալու (եռուր) որոշումին, դիտել տարով, որ այս բոլորը կը հարուածեն Ֆրանսացի ժողովուրդին ինքնուրոյնութեան: Սակայն, ֆրանսացիք այդքան ալ հետաքրքրուած չեն եւրոպայի այս տուեալով, եւ անոնց առաւելաբար շահագրգռող հարցը անգործութիւնն է եւ համարկույի հարցը: Ահա այս արտաճողութիւններով տեղի կ'ունենայ վաղը Ֆրանսայի նախագահական ընտրութեան Ա. Հանգրուանը, որուն կը յաջորդէ Բ. Հանգրուանը՝ 5 Մայիսին:

ՏՐԳ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

- Շարլ Տը Կոլ (Կօլիսթ). - 1958էն 1969
- ժորժ Փոմպիդու (Կօլիսթ). - 1969էն 1974
- Վալերի ժիսքար Տեպէշ (Կեդրոնի աջ). - 1974էն 1981
- Ֆրանսուա Միթերան (ընկերավարական). - 1981էն 1995
- ժաք Շիրաք (Կօլիսթ). - 1995էն 2002

ՆՇԱՐ

ԲԱՐԵԲԱԽՏԱԲԱՐ...



Բոլորս ալ գիտենք, որ կ'ապրինք անընա- կան պայմաններում մեջ, բաղադրանքներ մատուց- ւած են օրը օրը բնական արտադրանք տալու համար: Տնտեսական վիճակէն, մանաւանդ ներկայ օրերու անգործութեան եւ եկամտի պակասի անդոյս կացութեան դիմաց բաւական մտահոգիչ տրամադրութեան մէջ կը գտնուինք:

Ազգային, ընկերային, կրթական քե մշակութային մեր կեանքը նոյնպէս կախեալ է վերջը նշուած տնտեսական անբաւարար գոյակի- նակէն: Այս բոլորին վրայ կու գան աւելնալու արդիական հմարքները «պարտադրած» վիճակը. հակում՝ դէպի համացանցի (ինթըրնէթ, նեթուրք, չեթինկ եւ միւսները): Այս օրերուն գիտութիւն սորվելէ, նորութիւններ իմանալէ, օրուան հետ քայլ պահելէ անդին՝ վնասակար մթնոլորտ մը կը տիրէ մեր շուրջը: Մեծով ու փոքրով գերին դարձած ենք դարուն նորագոյն գիտութեան՝ մոռնալով մարդկայինը, ազգայինը, մշակոյթը: Ենթադրուած ենք վախի մը, որ եթէ մեր 5 - 6 տարեկան թոքովախօս երեխան հիմակուրէն չեն տի սա ճերմակ պատտառին դիմաց եւ մատները վեր վար չդարձնէ նկարներ եւ խաղի տեսարաններ կորզելու, մեր գաւազը պիտի մնայ շատ տգետ, ոչինչ իմացող: Նոյնիսկ չենք սպասեր, որ երեխակ ինքը անդրադառնայ եւ ենթարկուի իր սիրած խաղին: Այսօր կեանքը կը սկսի համակարգչային խաղերով, աշխատանքով, իրաւ աշխատանքով, գործին կարիքին համաձայն կողմնորոշումով: Իրարու խոնձուած են խաղն ու կենսականը, անհրաժեշտ ու ոչնչաբանութիւնը, զուարճալիքն ու լուրջ աշխատանքը: Կորսուած ենք խոնձիմանակներ մը մէջ ու չենք գիտեր ի՞նչ ընել...

Բայց, բարեբախտաբար, այս նոյն մթնոլորտին ու արտասովոր միջավայրին մէջ մշակութային նշոյլ մը մեզ լուսաւորեց: Մանկապատանեկան թատերական աշխատանք մը բեմ բարձրացաւ շնորհիւ մեր մանուկ ու պատանի գաւազներուն: Եւ շնորհիւ Համագոյնային մշակութային նախագահութեան: Կ'ակնարկենք «Արեգ» մանկապատանեկան թատերախումբի այս օրերուն ներկայացուցած «Հանճարի անճարակները» բովանդակական հեքիաթներու բեմականացումը պատկերներուն: Բեմադրիչ, դերասան, հայրենի արուեստագետ Վիգէն Ստեփանեանի ջանքերուն եւ խանդավառութեան, հետեւողական աշխատանքին (ու ասիկա վերջին երեք տարիներուն) շնորհիւ կարելի եղաւ մեր նորածիլ սերունդին հասկնալ, թէ արուեստ, մշակոյթ կոչուող ուրիշ ԲԱՆ մըն ալ կայ ՆԵՐՈՒԸՐՔԷՆ գատ, եւ անկէ առաջ... Անշուշտ ծնողք եւս ուրախացան ի տես իրենց շնորհալի, աշխատակար գաւազներուն բնածին շնորհներուն ծագումով դիտելով: Ու ասիկա փոքր ուրախութիւն չէ, վերել յիշուած մեր «տագնապներուն» դիմաց յաղթական ու մերժողական տրամադրութիւն, պարտողական ու անոյս խեղճութեան դիմաց:

Քարոզչական բնոյթի խօսք ու գիր չնկատուին մեր ակնարկին միջոցով տուած մտահոգութիւնները: Ճշմարտութեան օրէնքը ի գորու պէտք է դառնայ այսօր որեւէ ժամանակէ աւելի, երբ անտեսուած են գիրքն ու մամուլը, արուեստն ու անոր բոլոր պատկանելիութիւնները:

Կը ծափահարենք մեր գաւազները դէպի արուեստ առաջնորդող մեր ուսուցիչները, մշակութային գործիչները, մեր ծնողները, որոնք հաստատելով մշակոյթին ներսը գործութիւնը նեցուկ կը կանգնին նախաձեռնող դպրոցներուն թէ միւսներուն, որպէսզի նոր սերունդի գաւազները փրկուին ստրկացող պարտադրանքներէ, որպէսզի անոնք բացուին դէպի մարդկային գիտութիւն, գոր անուանած են ՄՇԱԿԱՅԻՄ:

ՇԱՀԱՆԳՈՒՅՏ

ՈՇԳՈՒՄ

Մեր երկուան թիւին 4րդ էջով լոյս տեսած «Լ. Օ. Խաչի «Աճի» մասնաձիւղի 30ամեակ» թղթակցութեան մէջ, պարզաւորուած ԼՕԽականներուն կարգին է նաեւ Էլչիս Տօսիկան:

Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱԳՐԱՄ

Հայաստանի կեդրոնական Դրամատան խորհուրդը իր 16 Ապրիլի նիստին որոշած է հրատարակ ինքնընել Արամ Խաչատրեանի 100ամեակին նուիրուած յուշագրամ մը:

Կեդրոնական Դրամատան կառավարման բարձրագոյն մարմինը հաստատած է Հայաստանի կեդրոնական Դրամատան 2001 թուականի տարեկան ծրագրի ներու նախահաշիւի ու մեծ ներդրումներու ծրագրի:

Խորհուրդը նաեւ որոշած է հրատարակել Հայաստանի կեդրոնական Դրամատան 2001 թուականի տարեկան վիճակագրական տեղեկագիրը եւ կեդրոնական Դրամատան ամսաթերթի Մարտ ամսուան թիւը:

Կեդրոնական Դրամատանը տուած էր նաեւ այլ որոշումներ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ

Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան 15 Ապրիլին հրամանագիր մը ստորագրած է Հայաստանի ներքին գործոց փոխնախարար եւ ոստիկանութեան գեղապետ Արմէն Երիցեանին ոստիկանութեան գործարի կոչում շնորհելու մասին:

Դարձեալ Հայաստանի Ոստիկանութեան Օրուան առիթով, նախագահ Ռ. Քոչարեան նոյն օրը հրամանագիրով մը ծառայութեան ընթացքին ցուցաբերած խիզախութեան համար արիւթեան մետալով պարգեւատրած է հարիւրապետ Արմէն Բարսեղեանը (յետ մահու), հազարապետ Արշաւր Գեորգեանը, հազարապետ Դաւիթ Գեորգեանը եւ աւագ տասնապետ Զոհրապ Տոֆանեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՊԵՆԼՈՒՈՒՍԻՈՑ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

15 Ապրիլին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան հանդիպում մը ունեցաւ Պեղոսուսիոյ ներքին գործոց նախարար Վլադիմիր Նաուժովին հետ. վերջինս նաեւ ԱՊՀի անդամ երկիրներու ներքին գործոց նախարարներու խորհուրդին նախագահն է:

Վ. Նաուժով եւ հանդիպման ներկայ անոր պաշտօնակից Հայաստանի ներքին գործոց նախարար Հայկ Յարութիւնեան վարչապետին ներկայացուցած են մինչեւ հիմա երկու երկիրներուն ներքին գործոց նախարարութիւններու միջեւ համագործակցութեան բարձր մակարդակը, ընդգծելով, որ այդ ընթացքին երբեք խնդիրներ չեն ծագած եւ գործակցութիւնը զարգացած է արդիւնաւէտ կերպով:

Նախարարներ նաեւ տեղեկացուցած են երեւանեան հանդիպման ընթացքին ձեռք բերուած համաձայնութեան մասին՝ նշելով, որ մշակուած են փոխարարութիւններու զարգացման ուղղուած հետագայ քայլերը եւ ստորագրուած է համապատասխան համաձայնագիր:

ՀԱՐՅԱԶՐՈՅ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՆՈՐԱՅՐ ԷԼՍԱՅԵԱՆԻ ՀԵՏ

«Ասպարէզ» օրաթերթը հարցազրոյց մը ունեցած է Հայաստանեանական եւ նախկին իրանահայ մտաւորական, ազգային գործիչ Նորայր Էլսայեանի հետ, որ շրջան հրատարակած է Հ.Մ.Ը.Մ.ի Պըրպէնքի «Սիփան» մասնահիւրին կողմէ:

Սոսելով Հայաստանի ներկայ կացութեան մասին՝ Ն. Էլսայեան ըսած է, որ թէեւ տնտեսական վիճակը ծանր է, սակայն երկրին մէջ օրէ օր բարելաւում կ'արձանագրուի: Ան աւելցուցած է, թէ հակառակ անոր որ անգործութեան տոկոսային համեմատութիւնը բարձր է, սակայն կենսամթերքի եւ այլ կարիքներու տեսակէտէն առատութիւնը նկատելի է: Մշակութային կենսաբան շարժում է եւ բաւական մեծ թիւով գիրքեր կը հրատարակուին: Անդրադառնալով դաշնակցական գրականութեան՝ ան նշած է, թէ անկախ մեծ մասամբ անգլոսախոյն է Հայաստանի մէջ՝ նախկին խորհրդային Միութեան տարիներու արգելքին պատճառով: Ան աւելցուցած է, թէ վերջին շրջանին որոշ գիրքեր քիչ քանակութեամբ սկսած են հրատարակուիլ, ինչպէս՝ Միքայէլ Վարանդեանի «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը», Ռուբէնի «Յուշերը», Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւնը»: Ն. Էլսայեան ըսած է, թէ Դաշնակցութիւնը բաւական լաւ աշխատանք կը տանի եւ անոր երիտաւորական Միութեան անդամները արտասահմանի երիտասարդներուն հետ շփում ունենալով կը լիցքաւորուին: Ան նշած է, թէ Դաշնակցութեան հանդէպ ընդհանրապէս ժողովրդային դրական մօտեցում կայ: Հայաստանի ներքին կենսաբան մասին խօսելով՝ ան ըսած է, թէ հայ ժողովուրդը իր բոլոր հատուկներով պէտք չէ օժանդակէ արտադրողին, այլ աշխատանք պէտք է տանի դժուարութիւնները դիմազրաւելու եւ Հայաստանին օժանդակելու համար, որպէսզի հայրենիքի մէջ կենսաբան տանելի պայմաններ ստեղծուին:

Անդրադառնալով իրանահայ գաղութին՝ Ն. Էլսայեան նշած է, թէ ինք երկար տարիներ իր գործուն մասնակցութիւնը բերած է իրանահայ կենսաբան: Ան ըսած է, թէ վերջին տարիներուն իրանի Յեղափոխութեան պատճառով կարգ մը դժուարութիւններ ստեղծուած են, սակայն հայկական գաղութին մէջ գերակատարութիւն ունեցող կազմակերպութիւններն ու անհատները ճիշտ չեն խնայելու հարթութիւնը: Եկեղեցիները, դպրոցներն ու միութիւնները միշտ կարելիութեան ունեցած են ինքնուրույն ձեւով գործելու: Ան ըսած է, թէ գաղութին թիւը նուազած է, հեռացողներ եղած են, սակայն հանրային կենսաբան մէջ բաւական աշխուժութիւն կայ:

ԿՈՆՍԱՆԴԻՆ ՕՐԲԷԼԵԱՆԻ ՂԵԿԱԿԱՐՈՒԹԵԱՄ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻՔ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Լիբանանցի ստեղծագործողներու երաժշտական երկերը երեւան հանելու, անոնց գեղարուեստական ինքնութիւնը բացայայտելու եւ նոր ստեղծագործութիւններու ծնունդը խթանելու անհրաժեշտութիւնը միշտ ալ ունեցած է Լիբանան: Մէկ կողմէն անցնող տարիներուն պատերազմական իրավիճակը, միւս կողմէն ալ լուրջ երաժշտութեան նկատմամբ հետաքրքրութեան պակասը նուազագոյնի իջեցուցած են լիբանանեան մեծ կտաւի երկերու կատարումները:



Կոնստանդին Օրբելեան

Լիբանանցի հեղինակներու երկերով: Նուազատար խումբը կը ղեկավարէ

Լիբանանեան առումով երաժշտական իրադարձութիւն մը դառնալ խոստացող այս նախաձեռնութեան արտադրիչներն են վերջերս բազմաթիւ երաժշտական-մշակութային համապարփակ ծրագրիներ իրագործած Ղատի եւ Ուսամա Ռահպանի եղբայրները, որոնց գործունէութիւնը միշտ ալ բարձր գնահատուած է լիբանանցի ժողովուրդին կողմէ:

Համերգին ընթացքին պիտի կատարուին Ռահպանի եղբայրներու «Ժիպէլ Ասաւուան» (1969), Պողոս Զեյալեանի «Sept Sequences pour orchestre» (1968), Էլիաս Ռահպանիի (Danse N° 2) (1966), «Poem Symphonique. Le regard de Christ» (1979), Պըշարա Էլ Սուրիի «Danse pour orchestra» (1980) (առաջին կատարում) երկու հատուած Մանուր Ռահպանիի «Les derniers jour de Socrates» (1998), Կապրիէլ Եարէտի «Camille Clandel»ի suiteը, եւ Ռահպանի եղբայրներու «Prince Fakhre Eddin»ի suiteը: Աստի, Մանուր եւ Էլիաս Ռահպանիներու երաժշտութեանց գործիքաւորումները կատարած են Ղատի եւ Ուսամա Ռահպանիները:



Աստի եւ Մանուր Ռահպանիներ

21 Ապրիլի երեկոյեան հայագի դաշնակահար- ժամը 9:00ին, «Քաղից» նուազատար կոնստան- Տիւ Լիպան»ի սրահին մէջ ղին Օրբելեան: Ան ծնած է Սան Յրանսիս- քօ եւ ուսած Մոսկուա եւ ապա՝ Նիւ Եորքի «Ճուլիարտ» համալսարանին մէջ: 1991էն սկսեալ ղեկավարել է ետք Մոսկուայի սենեկային նուազատար խումբը՝ 2000ին ստանձնած է Ֆիլի- հարմոնիք նուազարուներին գեղարուեստական ղեկավարութիւնը, ելուցներ ունենալով ան- կանի սրահներու մէջ, ինչպէս՝ Ամսթերտամի, Պերլինի, Լոնտոնի ելուցները: Բացառապէս



Պողոս Զեյալեան

Ելուց պիտի ունենայ Մոսկուայի հանրաժանօթ Ֆիլիհարմոնիք նուազարուները՝ բացառապէս

«Լիբանանեան 1960ական թուականներու մեղեդիներու նորագոյն մշակումներն ու լիբանանցի նոր հեղինակներու նորագոյն ստեղծարարութիւններն են Ղատի եւ Ռահպանիներու երաժշտական այս ցուցահանդէսը, բարձրարուեստ նուազատարի մատուցմամբ եւ արդէն իսկ միջազգային վարկ նուաճած եւ Լիբանանէն դուրս ալ հանրալայտ ստեղծագործողներուն իսկ գործերով պայմանաւորուած, լաւագոյն առիթ մը պիտի ըլլայ ընդհանուր արժեւորումի թէ երաժշտական վայելքի առումով, որուն «Ազգակ» պիտի անդրադառնայ հետագային եւս:

ՄԱՆՈՒՅՈՒՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելու հարկ (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

STUDIO Lantern
«Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-266866 Եւ 03-695399

ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ԵՆՈՅԹՆԵՐ
ՀԱՄԱԿԱՐԱՅԻՆ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅԵ՛
«ՀԱՆՃԱՐԻ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ»
Հետեւողութեամբ՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ Թատերագիր եւ բեմադրիչ՝ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
Տեղի կ'ունենայ Զաբաթ, 20 Ապրիլ երեկոյեան ժամը 8:00ին եւ Կիրակի, 21 Ապրիլ կէսօրէ առաջ ժամը 10:00ին եւ կէսօրէ ետք ժամը 5:00ին, «Յակոբ Տըր Մելքոնեան» թատերարահին մէջ:

Գրական Էջ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

«Ժողովրդի պատմության մէջ մնալը փառք է: Երջանիկ են այն արուեստագէտները, մտածողներն ու գործիչները, որոնք յիշուում են ժողովրդի կողմից, դառնում են նրա սիրուած անուններից մէկը»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

Հայ ժողովուրդի այս մեծանուն գրական, Հայաստան աշխարհի ծիլից ու լոյսից, ջուրից ու երկիւնքից, հողից ու ամպից, ժայռից ու արծիւներուց ոգից ու խորհուրդները երկններանց լուսապատարագի վերածած Մարտիրոս Սարեանի վերի իմաստուն հաստատումը որքան գեղեցիկ է եւ հնչեղ:

«Ժողովուրդի պատմության մէջ մնալը փառք է»:
Անկասկած: Իրաւամբ երջանիկ են այս պատիւով բախտաւորուած արուեստագէտները, որոնք կը հաստատուին իրենց ծնունդ տուած ժողովուրդին սրտին մէջ եւ կ'անմահանան: Բայց առաւել բախտաւոր ու բացառիկ բացառիկներ են այն հագուագիտ արուեստագէտները, որոնք ոչ միայն կ'արմատանան իրենց հարազատ ժողովուրդի խնդրանքին ու յիշողութեան մէջ, այլև իրենց բարեսիրտ արմատները կ'երկարեն դեպի ուրիշ ժողովուրդներու սրտերը: Կ'եղբայրանան արդարօրէն եւ կը դառնան յաւերժի ժառանգորդներ:

կառչին, ո՛չ միայն կը դառնան վերածնելու, ստեղծագործելու, ապրելու եւ ապրեցնելու, եւ հուսկ յաղթանակելու ու անմահանալու գաղտնիքները նուաճած ի վերուստ ընտրեալ ազգեր, այլև իրենց կողքին կը գտնեն իրենց վիշտն ու տառապանքը, մորմըն ու երազը նոյն ապրումով եւ միեւնոյն նուիրումով բաժնող հոգեղբայրներ:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՊՐԻԼ

Հայ մարդու հոգում, յիշողութեան մէջ Այս վերջը բերդ է դարձել անառիկ. Ոչ մի ուրիշ թիւ, ուրիշ վերջ ու վէճ Չի կարող ջնջել թիւը՝ տասնհինգ... Իսկ ես, ես՝ ծնունդ երեսունհինգին, Ես մի ռուս անաչուկ՝ հեռուում մեծացած, Սոսկ հիմա հասաւ իմ ջահել ունկին Այս բոթ բառերը՝ «Եղեռն, կոտորած»... Գնդակը՝ պայթած տասնեւհինգ թուին, Սոսկ հիմա խոցեց սիրտս անապակ. Անէ՛ծք, բիրտ անէ՛ծք դահճին այն վայրագ: Անէ՛ծք՝ անուանը, անէ՛ծք՝ աճիւնին... Իսկ Հայաստանը, նա ապրում է, կա՛յ, Իսկ Հայաստանը՝ պատանու մի սիրտ. Բիրտ ուժը արդէն անուժ է հիմա, Սիրուց են ծնունդ անուկները միշտ: Բայց հայի հոգում խոր գծում է դեռ Սուրբ Կոնստանտին խաչակիր ուղին, Գծում է, ձգում սերունդների դէմ, Որ քայլեն զգաստ, որ քայլեն ուղիղ, Որ կեանքով յաղթեն դաւիտ ու մահուան, Որ երկրպագեն արարիչ լոյսին... ... Հին խաչքարերը ծերերի նման Հանդարտ պատմում են յաւերժի մասին...: Իսկ եթէ նորից՝ թռչուններն այստեղ Թեւածեն սահից նենգ տարածածին, Ու նորից իջնի աղէտ մի ահեղ Իմ նո՛ր, նո՛ր գտած իմ Հայաստանին, Երդուում են, վկայ այս հողը արդար, Ես էլ կը դառնամ վիճուորդ նրա, Ու թէ հարկ լինի՝ կ'ընկնեմ իր համար Իր տաք, վիրաւոր քարերի վրայ...

ՄԱՐԲ ԱԻԺԿՈՎ

(Թարգմ.՝ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ)

ԿԵՆԱՑՆԵՐ ԵՒ ԽԱՉՔԱՐԵՐ

ԳԵՆՐԳ ԷՄԻՆԻՆ

Մի՛նչ կենացները՝ քիչ-քիչ քաղցրանում, Քիչ-քիչ սառչում էր ճաշը մոռացուած, Երկու հին խաչքար սե՛գ էին ճայում, Մէկը՝ դեռ կանգուն, միւրը՝ ջարդուած...
Ես գիտեմ, մի օր աշխարհից արար կը ջնջուեն սահման ու սահմանագիծ, Լոկ ծիածանը կը կապի կամար, Եւ ես... Մասիսը կը սեղմեմ կրծքիս: Իսկ թէ ո՛չ... (միայն թէ ուժս ների՛...), Այլ սուրբ բերդ տակ թէկուզ փշրուեմ, Ես Մասիս սարը կ'անցնեմ ուսերիս եւ մե՛ն-միայնակ այստե՛ղ կը բերեմ...

ԵՒԳԻՆԷ ԵՒՏՈՒՇԵՆԿՈ

Անցնում է ճեղքն այս կիսուած աշխարհի Պոետի սրտով... - Ես այդ չգիտեմ,- Բայց սրտի միջով այս հին խաչքարի

Անցնում է - ահա՛ փաստը՝ դէմ առ դէմ...

Սեւանը, հայոց թա՛ց աչքի նման, Նայում է երկնի վսեմ տաճարին, Իր խորքում հայոց Լե՛ռը սրբազան Եւ հայոց վերքի բալասա՛նը հիմ... Ես նո՛ր հասկացա՛յ՝ իճչո՛ւ է միշտ նոր Հո՛ղմ այս հնագոյն. Եւ իճչո՛ւ է միշտ յարութիւն առնում Քո ազգը խաչուած.- Այստեղ ձեր ամէն մէկի թիկունքին Խաչքա՛ր կայ երկու - Մէկը՝ դեռ կանգուն, միւրը՝ ջարդուած...
ՄԱՐԻՍ ՉԱՎԼԱՅՍ

(Թարգմ.՝ ՅՈՎՀԱՆ ՆԷՄ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ)

ԳԵՆՐԳ ԷՄԻՆԻՆ

Օ՛, ո՛չ. Ես՝ չէ ուսուցողաբար հայի, Ով նրա վիշտը կիսել չի ուզում, Կոնեա՛կ է կոնծում միայն արխային, Կամ ձեր ուղիղ ճանաչողութեամբ ասում. Այլ Ես՝ մօ՛տ է ում սրտին ու հոգուն Ձեր բա՛խտը դաժան, բա՛խտը հայկական Ով այնպէ՛ս է ձեր խորունկ վիշտն զգում, Ինչպէ՛ս զգում է վի՛շտն իր սեփական... Մե՛նք շա՛տ ենք մէկտեղ տեսապել կեանքում, Նոյն կռուի դաշտում զոհ տուել այնքա՛ն. Երբ եղբայրութիւնն արեա՛մբ է կնքուում, Այնտեղ փոքր ու մեծ եղբայրներ չկա՛ն... Դրանից չէ՛, որ խուռած չար ձեռքով, Բայց իճճ հարազատ՝ մեծ եղբոր նման, Մասիսն, աղբրով ու կշտամբանքով, Ինճ, որպէս հայի, կանչո՛ւմ է հիմա...

Ես գիտեմ, մի օր աշխարհից արար կը ջնջուեն սահման ու սահմանագիծ, Լոկ ծիածանը կը կապի կամար, Եւ ես... Մասիսը կը սեղմեմ կրծքիս: Իսկ թէ ո՛չ... (միայն թէ ուժս ների՛...), Այլ սուրբ բերդ տակ թէկուզ փշրուեմ, Ես Մասիս սարը կ'անցնեմ ուսերիս եւ մե՛ն-միայնակ այստե՛ղ կը բերեմ...

(Թարգմ.՝ ԳԵՆՐԳ ԷՄԻՆԻՆ)

«ՆԱՄԱԿ ԻՍ ՀԻՆ ԹՈՒՐՔ ԾԱՆՏՈԹԻՆ»՝ ՅՕԴՈՒԱԾԻ ՆՈՐ, ԸՆԴԱՐՁԱԿՈՒԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ՝ «ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ՍՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ»-Ի ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

1965 թուականը յորելենական կը լինի հայերի եւ այն թուրքերի նահատակմանը, որոնք իրենց կեանքը զոհեցին կործանուող ժողովրդի պաշտպանութեան, դրա հետ մէկտեղ իրենց սեփական ազգային պատուի պաշտպանութեան համար, թէեւ իրենք էլ թերեւս չէին զիտակցում իրենց հերոսութեան վիթխարիութիւնն ու կշիռը:

Պարզապէս միայն մոռացութիւնից հանուելուց շատ աւելի մեծ բանի են արժանի Անատոլիոյ այն բոլոր հասարակ, անզրագէտ թուրք զիւղացիները, որոնք զոհուեցին մահուան քշուող քրիստոնեաներին մի բաժակ ջուր տալու համար, ինչպէս նաեւ նրանք, ովքեր զնդակահարուեցին՝ հայերին իրենց տներում պատսպարելու համար: Եւ այս՝ թէկուզ այն բանի համար միայն, որպէսզի աշխարհին ցոյց տրուի ձեր ժողովրդի մէկ այլ պատկեր, տարբեր այն պատկերից, որ մի ժամանակ երեւաց սարսփահար եւրոպացիների աչքին Ստամպուլի եւ Չիւրուքի փողոցներում:

Այդ անանուն հերոսներին ըստ արժանուան մեծարելը կը լինի միաժամանակ մեծարումն թուրք ժողովրդի, որի մէջ նման զոհարներ էլ են պարունակուում:

Սակայն դա կը լինի մեծարման տարին նախ եւ առաջ նահատակուած հայերի, չափահաս այրերի, որոնցից խլուած էր զէնքը ձեռքին մեռնելու վերջին հնարաւորութիւնը. նաեւ մահից առաջ իրենց մարդկային եւ կանացի արժանապատուութեան մէջ անարգուած կանանց ու նաեւ երեխաների, որոնց չվիճակուեց երբեք դառնալ լիարժէք մարդիկ, որովհետեւ խլուեց նրանց մանուկ կեանքը:

Դա կը լինի նաեւ մեծարման տարի սպանուած, նահատակուած կամ խեղաքրուութեան հասցուած ականաւոր հայերի՝ սկսած Մեծն Կոմիտասից:

Դա միաժամանակ կը լինի մեծարման տարին աշխարհի ամենաընդունակ ժողովուրդներից մէկի՝ միլիոն այն ջնջուած որդիների ու զուստների, որոնք ամենայն հաւանականութեամբ կեանքից չէին հեռանալ առանց հետք թողնելու:

Դա կը լինի մեծարման տարին խլուած եւ անպատուութեամբ հայկական

հողի, խլուած եւ անպատուութեամբ այն մարդկանց կողմից, որոնց համար Հայաստանին տիրելու իրաւունքի միակ հիմունքը այդ երկրի բոլոր բնակիչներին կոտորելու խայտառակ փաստն էր:

Դա կը լինի, ի վերջոյ, զոհուած ման տարի բոլոր հասարակութիւնների համար՝ քրիստոնեայ, մուսուլման, թէ՛ անդաւանաբ, որպէսզի հետագայում խուսափեն մարդասպանութեան ճանապարհից, որը տանում է միայն դէպի... այդ ոճիրը թոյլ տուած ժողովրդի յաւերժանական խայտառակութիւն:

Եւ երանի թէ մարդկութեան աչքում դա լինի ձեր պատուի լիակատար վերականգնման տարի: Եւ երանի թէ թուրք անունը այդ տարի ամբողջ աշխարհում չողջողայ միանգամայն այլ փայլով՝ նախկինում ձեր տարած բոլոր յաղթանակներից առաւել շլացիկ փայլով:

Այդ ճանապարհը դժուարին է, անշուշտ, քանի որ թուրք ժողովրդի ամենազննիզ գաղափարից պահանջուում է բարեկիրթ հոգու մեծ քաջութիւն, եւ, թերեւս, Մահաթմա Կանտիի նման ուժեղ քնաւորութիւն:

Սակայն գաղութներին ինքնակամօրէն ազատութիւն տալու եւ աշխարհի բոլոր պետութիւնների կողմից նախկին վիրաւորանքների հատուցման ներկայ ժամանակաշրջանում ձեր ժողովուրդը եւս պէտք է որոշակի ընտրութիւն կատարի՝ կամ ճշմարիտ մեծութիւն, կամ թէ՛ չէ... տարիներ առաջ կատարած ժողովրդասպանութեան արդարացուած, ժողովրդասպանութիւն, որ չբերեց ձեզ ոչ փառք, ոչ հարստութիւն, ոչ էլ, մահաւանդ, յարգանքն այլ ժողովուրդներին:

Այժմ աշխարհով մէկ ցրուած երկուսուկէս միլիոն հայեր 50 տարի է ինչ սպասում են ետ վերցնելու գոնէ մի մասը ձեր կողմից արհեստականօրէն անմարդաբանակ դարձած այն զաղուծի, որ իրենց հայրենիքն է եղել դեռեւս այն ժամանակ, երբ աշխարհիս երեսին չկային ո՛չ անգլիացիներ, ո՛չ ֆրանսացիներ, ո՛չ ինչեր, ո՛չ ռուսներ եւ ոչ էլ նոյն-նիսկ հռոմէացիներ, այն հռոմէացիները, որոնք աշխարհին տուին արժէքաւոր ասացուածք - աքսիոմ:

«Տուր՝ ինչ որ պարտք ես...»:

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՆԱՄԱԿԸ Բ. ԳԵՄԲԱՐՍԿՈՒՆ

Միտքի եւ Աստուածատուր Գեմբարսկի: Իրաւ աստուածատուր... Կարգացի Ձեր նամակը իմ բազմաշարժար հայ ժողովրդի մասին, ուղղուած մեր բազմադարեան, բթամիտ հարեւանին: Արցունքով լցուեցին իմ սրտի վաղուց քարացած աչքերը: Ահա մի մարդ, որ նորից ձայն բարձրացրեց կէսից աւելին կոտորուած ժողովրդի՝ նրանից խլուած վիթխարածաւալ հողերի, գրեթէ ողջ խլուած երկրի մասին: Ինչքան ազնիւ արդարութիւն կայ Ձեր սրտի մէջ, կարծես Ձեր մեծ սրտում մի բազմատարած հայուհի է խօսում անիծեալ սաստնոյ հետ, որ չկարողացաւ տեսնական անմահ Մովսէսին... Եւ ի՞նչպէս չի հայ իշխան Սահակ Բագրատունուն, ուղուում եմ թեամբ, եւ ինչպէս հոյակապ էինք վերլուծել 20րդ դարի ամբողջ պատկերը, ինչպէս մի աստուածատուր հայուհի է խօսում միայն հայելու մէջ, թող ամաչեն, թող դժոխքը չբռնեն արդարութեան անունից խօսող բոլոր ստատանները, որոնց ձեռքերը եւ հոգու բոլոր մասները արիւնոտ են... հայկական, լեհական եւ



նալկուած դատն է աշխարհի, այլ՝ բոլոր ժողովուրդների համար: Ձեր նամակը Ձեր հոգու բոլոր էջերն են եւ բոլոր էջերի վրայ գրած, ահա մեծ մարդը:

Հայ ժողովրդի բոլոր շուրթերով, որոնք մաքուր են ինչպէս միայն երկնքի աստղերը, համբուրում եմ քեզ եւ քո ազգը: Եթէ՛ գիտես այն՝ աշխարհի բոլոր դաշտերի ծաղիկները նոյնպէս մաքուր են աստղերի նման, նրանցով էլ կը համբուրէի քեզ:

Հաւատում եմ՝ հայոց դատը չի կորչի, Անմեղ ազգը անապատը չի կորչի, Ամէն փոքր մեծերից է՝ հաւասար Դժոխքում էլ Արարատը չի կորչի:

Յետեւութիւն, մինչեւ Արարատի սուրբ մեծերի վրայ համբուրուենք բոլոր ազգերի խաղաղութեան յաւերժական յաղթանակով:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Մանկապատանեկան

ՋՈՒՐԸ ՇԱՏ ՅԱՐԳԻ Է



Ջուրը մեր մեծագույն հարստությունն է: Սակայն մենք շատ գեշ կը վարուի՞նք անոր հետ:

ՋՈՒՐԸ ՀԱՉՈՒԱԳԻՏ Է
Ջուրը կը ծածկէ երկրագունդի մակերեսին մեծ մասը: Սակայն այս ջուրին մեծ մասը կարելի չէ գործածել, որովհետեւ ան աղի է կամ՝ ապականած: Միակ ջուրը, զոր կրնաք խմել կամ դաշտերը ջրելու համար, այլ նաեւ՝ գանազան ուրիշ կարիքներու համար:



ՋՈՒՐԸ ՊԵՐՃԱՒ ՄԵՆ Է...
Երբ ջուրի պէտք ունենանք, ծորակը կը բանանք: Մենք ընդ-

հանրապէս չենք անդրադառնար, որ ասիկա իսկական պերճանք մըն է: Երկրագունդի հինգ բնակիչներէն մէկը այս բախտը չունի:

ՋՈՒՐԸ ԱՆՀՐԱՓԵՇՏ Է
Մարդիկ օրական մեծ քանակութեամբ ջուրի պէտք ունին ո՛չ միայն խմելու կամ լուացուելու համար, այլ նաեւ՝ գանազան ուրիշ կարիքներու համար:

ՋՈՒՐԸ ՇԱՏ ՇՈՒՏ ԿԸ ՎԱՏՆՈՒՄ

Մենք շատ ջուր կը վատնենք: Օրինակի համար, տան մէջ ամանները լուալու համար մենք կը գործածենք 10 լիթր ջուր, լուացքին համար՝ 100 լիթր, 150 լիթր՝ լողաբանը լեցնելու համար, 10 լիթր՝ իւրաքանչիւր անգամ երբ բաղնիքին ջուրը կը քաշենք: Իսկ երբ կ'ուզենք ինքնաշարժը լուալ, 200 լիթր ջուր կը սպառուի:

ՋՈՒՐԸ ԱՆՊՈՒՆ ԶԷ

Եւրոպայի մէջ իւրաքանչիւր անձ օրական մօտաւորապէս 300 լիթր ջուր կը սպառէ: Այս քանակը շատ է: Մարդիկ կրնան մաքրել այս ջուրին կէսը՝ գայն դարձեալ գործածելու համար: Սակայն մնացածը կը կորսուի: Եթէ մենք այս ձեւով շարունակենք, ջուրի մեր պահեստները կամաց-կամաց պիտի սպառուին: Այս պատճառով մեզ մէջ իւրաքանչիւրը պէտք է սորվի ջուրը խնայել:

ՈՐՔԱՆ ՊԵՏՔ ՈՒՆԻՒՔ

- Պէտք ունինք ջուրով լեցուած 4 լողաբաններու՝ մէկ քիւօ գետնախնձոր կամ ցորեն անեցնելու տամար:
- Երեք լողաբան եւ մէկ երրորդի՝ մէկ քիւօ թուղթ պատրաստելու համար:
- Երկու լողաբան եւ մէկ երրորդի՝ մէկ քիւօ շաքար պատրաստելու համար:

ՋՈՒՐԸ ԶՎԱՏՆԵՆՔ

- Երբ ակռաները կը վրձնուեն, ջուրին ծորակը գոց պահել:
- Լողաբանը լեցնելու փոխարէն, տուշով լողցիր:
- Եթէ ծորակը ջուր կը փախցնէ, անմիջապէս ծնող-բիդ լուր տուր:

ԳԻՏԵՊՐ ԹԵ

ԹԻՆԿԵԱՆ ՋՈՒՐԻ ՓԱՌԱՏՕՆԸ



Ամէն տարի, 13 - 16 Ապրիլի միջև տեղի կ'ունենայ պուտտայական նոր տարուան յատուկ ջուրի փառատօնը: Մարդիկ նոր ճարին կ'ընդունին զիրար թրջելով: Ըստ պիւրման օրացոյցին, թթակիտին՝ երկնային թագաւորը, աշխարհ կ'իջնէ մարդոց վրեժակը քննելու: Այս առիթով, մինչ տարեցները տաճար կ'երթան, երեսասարգները ինքնաշարժներու մէջ կը լեցուին եւ զիրար թրջելով կը զբաղին:

ԱՅԼԱԶԱՆ

ՄՐՅԱՆԻՇ

Աշխարհի ամէնէն խորունկ փոսը 10,911 մետր է: Ան կը գտնուի Նաղաղական ովկիանոսին մէջ, Ֆիլիպինեան կղզիներուն մօտ: Եթէ մենք էվերէսթի գագաթը գետեղենք այդ փոսին մէջ աշխարհի բարձրագոյն պիտի մխրճուի 2061 մետր ջուրի տակ:


ՏԱՐՈՐԻՆԱԿ

Անգլիական ընկերութիւն մը փորձեր կը կատարէ քաղաքի մէջ առանձինն շարունակ ինքնաշարժի պատրաստութեան: Ենթադրուի իր պատիկ ուսուցիչներուն եւ նկարիչ փոքր սարքերուն, ինքնաշարժին համակարգիչը պիտի չափէ պարապ տեղը՝ գիտնալու համար, թէ ինքնաշարժը կը բաւէ՞ հոն: Ապա ան պիտի ղեկավարէ ինքնաշարժը եւ առանձինն շարէ գայն:



ԹԻՒԵՐ

Չափահաս ոզնի մը իր կռնակին վրայ ունի 800 փուշ: Այս փուշերը 2,5 սմ երկայնք ունեցող, մէջը պարապ ասեղներ են: Անոնք ամուր ձեւով հաստատուած են մորթին վրայ եւ կը բանին շնորհիւ մկաններուն: Անոնք անմիջապէս կը ցցուին վտանգի պարագային: Ոզնին իր փուշերը կը փոխէ կանոնաւոր ձեւով: Տարի մը ետք անոնք կը թափին եւ նոր փուշեր կը յայտնուին:



600 ՔԻԼՕ

Մովերուն խորերը գտնուող «Թալթալի»-ը ամէն օր 600 քիլո երկաթ կը կորսնցնէ: Այս երկաթը իբրեւ «Կերակուր» կը ծառայէ գայն փտեցնող մանրէններուն: Այս շատակեր էակները ուսումնասիրած գիտնականներուն համաձայն, 200 տարի ետք «Թալթալի»-էն պիտի մնայ միայն ժանգի կոյտ մը:

ՆԱԽԱՊԱՏԱՄԱԿԱՆ ԽԵՓ

Հնաբաններ գտած են, որ նախապատմական կարգ մը մարդիկ արդէն գիտէին խէփ պատրաստել: Անոնք կը տաքցնէին ցարասիին արտադրած խէփը եւ ապա գայն կը գործածէին կայծքարի շեղքեր փայտէ կոթերու վրայ հաստատելու համար:



ԹՎԱԳԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՋՈՒՐԻՆ ՏԱԿ

Սուզուող հնաբաններու խումբ մը գտած է կղզեպատրայի պալատը (Ք. Ա. 60-30 թուական): Ներկայ Ադեքսանդրիոյ նաւահանգիստի ջուրերուն մէջ երկար պեղումներ կատարելէ ետք, վերջապէս յայտնուած են 1600 տարիներ առաջ երկրաշարժի մը ընթացքին ջրամոյն եղած առասպելական քաղաքին ամէնէն հին թաղամասերը: Եւ յատկապէս՝ Անթիոնոս կղզին, ուր կը գտնուէր Եգիպտոսի թագուհիին պալատը:




1995 թուականին յայտնաբերուած Ադեքսանդրիոյ առասպելական փարոսէն ետք, ծովը այժմ նոր գանձեր կը յանձնէ մեզի:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջև գոյութիւն ունեցող 6 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել 2 տարբեր պատկերները:



Քանի՞ մատիտ կը տեսնես այս պատկերին մէջ:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ

«ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի 27 Ապրիլ 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ կրնաք գտնել «Պզտիկ-Սզտիկ»ի թիւ 1ի ժամանցի բաժնին պատասխանները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Նախագահություն
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ
 (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

Կազմակերպություն
 Ս. ԱՍՏՈՒԱՃԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
 ԹԱԼԱՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ
 ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ
 ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի յիշատակ
 Ս. Աստուածածին Եկեղեցույ եւ Ազգային Աբգարեան վարժարանի ճեղքեցեալ հիմնադիրներու, Աստուածայի բարերարներու եւ գործողներու,

հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 28 Ապրիլ 2002, Նոր Աստուածայի Ս. Աստուածածին Եկեղեցույ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ԼՕԻԻ
 «ԱԳՐԱՄԱՐ»
 ՄԱՆՆԱԾԻՒՂ - ԱՅՆՆԱՐ

60ԱՄԵԱԿԻ
ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ

18 ՄԱՅԻՍ 2002

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

Շ. Ս. Բ. Ս. Ի
ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ
 «SHERATON CORALBEACH»

1 ՅՈՒՆԻՍ 2002

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Էթղէջի նահատակներուն եւ Էյալէզի հին ու նոր ճեղքեցեալներու հոգույն հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Ապրիլ 2002, Նոր Աստուածայի Ս. Աստուածածին Եկեղեցույ մէջ, յաւարտ Ս. պատարագի, Զայլայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ Եկեղեցույ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից, իսկ յիշատակի պաշտամունք պիտի կատարուի Ամառուի Հայ Աւետ. Էմմանուէլ Եկեղեցույ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

Յարգանք անոնց յիշատակին:
 Էթղէջի ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐՈՒՍԵԱԿ ՏԵՐ ԳԵՆՐԳԵԱՆԻ (մահացած՝ Ամսթերտամ) մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Ապրիլ 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԵՐՄԻՆԷ ԶՓԱՐԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Ապրիլ 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՊՐԻԼԵԱՆ ՁԵՆԱՐԿՆԵՐ

Շ. Շ. Գ. Ա. Ա. ԱՐԵԲԵԱԿԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝

ՓՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Կը ներկայացնէ՝

ԶՐՈՅՑ - ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԲ ՍԸ

- Հրապարակային դասախօսութիւն: «Ազգային ինքնորոշման իրաւունքը եւ տարածաշրջանային հակամարտութիւնները (Անդրկովկաս - Միջին Արեւելք): Երկուշաբթի, 22 Ապրիլ 2002, երկույեան ժամը 8:30ից, Շ.Շ.Գ.Ա. Տեմիքեան կեդրոն՝ Բ. յարկ:
- Դասախօսութիւն AUB Ամերիկեան համալսարանին մէջ (Isam Fares Hall): The Regional Conflicts and the Right of National Self Determination Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002, կեսօրէ ետք ժամը 2:00ից:

ՏԱՐԵԴԱՐՁԻ ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒԲԵՐ

VIDEOԻ ԿԱՍ ԵՈՒ ՎՐԱՅ
 VIDEO CLIPՆԵՐ

ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԵՔԵՃԵԱՆ ՎԱՍ.
 Շեռ. 01 / 261696, 03 / 250518

ՊՈՒՐՃ ՎԱՍՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՅԻԱԿ ԶԱՎՈՐԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԷՐ

Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլեճին մէջ հաստատուած Պուրճ Վասուտի Առաջին Ժողովրդային Գրադարանը 15 Ապրիլ 2002ԷՆ սկսեալ կը գործէ հետեւեալ ժամանակացոյցով.

Երկուշաբթի Ուրբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 10:00ԷՆ երկույեան ժամը 8:00
 Յարաբ օրերը՝ առաւօտեան ժամը 9:00ԷՆ կեսօրէ ետք ժամը 3:00
 Գրադարանէ կրնան օգտուիլ ամէն տարիքի եւ զանազան լեզուներով հետաքրքրուեան տըր անձեր:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամա- հիշներու փակման սակագրերը հետեւեալներն էին:

Սուրիական թղթակի	31,50 - 33,50 լ.ն.
Իրաքեան տիւար	50,00 - 51,00 լ.ն.
Պահրէյնեան տիւար	3990,00 - 4010,00 լ.ն.
Քուէյթեան տիւար	4906,42 - 4910,42 լ.ն.
Յորդանանեան տիւար	4896,42 - 4950,24 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տիւար	408,43 - 412,42 լ.ն.
Սէուտական ուիալ	399,90 - 403,99 լ.ն.
Օմանեան ուիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Քաթարեան ուիալ	412,15 - 416,15 լ.ն.
Եգիպտական կիւնէ	323,72 - 327,72 լ.ն.
Անգլիական սթերլին	2164,70 - 2168,11 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	902,35 - 904,52 լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64 լ.ն.
Կիպրական փաունտ	2391,25 - 2395,35 լ.ն.
Ճափոնական հապար եֆն	11,28 - 11,32 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	939,40 - 943,85 լ.ն.
Աւստրալիական տոլար	801,85 - 805,70 լ.ն.
Եւրո	1321,95 - 1325,16 լ.ն.

● ՈՍԿԻ
 Անգլիական մէկ ոսկի 105,000 - 115,000 լ.ն.
 Իրանեան մէկ ոսկի 91,000 - 101,000 լ.ն.
 Օսմանեան մէկ ոսկի 80,000 - 90,000 լ.ն.
 Մեքսիկական փէսոս 474,000 - 498,000 լ.ն.
 Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 12,300,000 - 12,800,000 լ.ն.
 Մէկ օսն ոսկի 301,68 - 303,72 \$
 Մէկ օսն արծաթ 4,64 - 4,68 \$

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
 Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում

Ա. կարգի	4 4/8	4 4/8
Բ. կարգի	4 6/8	4 7/8

բաժնետիրոջ

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամահիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը	0.8907
Եւրո	7.4287
Ֆրանսական ֆրանք	1.5746
Քանադական տոլար	2.215
Հոլանդական ֆլորէն	2.4957
Չուիցերիական ֆրանք	1.6475
Պելիքական ֆրանք	45.685
Իտալական լիր	2192.83
Ճափոնական եֆն	129.87
Շուէտական քրոն	10.2915
Նորվեգիական քրոն	8.5753
Դանիական քրոն	8.3428
Մէկ սթերլին	1.4473

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
 Մանր - մուր անային հոգեւ պիտի խանգարեն օրուան ձեր հանգիստը: Միջոցներ ձեր առէք, որպէսզի կարենաք միանգամընդմիջ լուծել հարցերը:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Երբեմն կը պատահի, որ ձեր խօսքերը սխալ մեկնաբանուին, որովհետեւ արտայայտուելու ճիշդ ձեւը չէք գտներ: Հետեւաբար այսօր ձեր «գիմիին ջուր խառնեցեք» քիչ մը, որպէսզի թիրիմացութիւնները այսօր փարստին:

☆ **ԲԿՈՒՆՈՒՆ** (22 Մայիսէն 21 Յունիս)
 Ընտանեկան հարաբերութիւնները կամ պտոյտ մը քիչ մը ծախս պիտի բանայ ձեզի, բայց ձեր ընտանիքին երջանկութիւնը ալ անգին է: Կ'արժէ մտածել այդ ուղղութեամբ:

☆ **ՆԵՑՅԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
 Ձեր տրամադրութիւնը անկում կրած է այսօր ու չէք գիտեր, քէ ինչու: Սթափեցեք յոռետեսութենէն եւ ամէն ինչ լաւ պիտի ընթացայ: Լաւտես եղէք:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
 Երբ մէկը ձեզ մղէ կամ ստիպէ փնտրանելու, մնացեք հանդարտ ու ձեր իմաստութեամբ ջանացեք ձեզմէ հետեւեալ լարուած բախարհը:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 Մրագիր մը շատ մի՛ հետապնդէք, որովհետեւ երբ քիչ մը այդ մասին մտածէք՝ պիտի հաստատէք, որ անիրականաւոր ծրագիր մըն է այդ: Ուրեմն հրաժարեցեք անկէ:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
 Օրը յատկացուցեք հանգիստի, որովհետեւ քիչ մը յոգնած էք: Նոր ուժ հաւաքեցեք, որպէսզի յաջորդ շաբաթ կարենաք կարեւոր գործեր կատարել:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
 Երբորդ անձի մը իրաւարարութեան մի՛ դիմէք, որովհետեւ անոր դատողութիւնը արդար պիտի չըլլայ, իսկ դուք հաւանաբար յուսախաբ մնաք իրմէ:

☆ **ԱՂԵՂԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 Բախտախաղի կամ այլ կարգի ծախսերու պարագային եղեք զգուշ, որովհետեւ օրը բախտաբեր չէ, ոչ ալ ծախսելը օգտակար է...

☆ **ԱՅՍԵՂՁԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 Թոյլ մի՛ տաք, որ անհասկացողութիւնը տեղ գտնէ ձեր շուրջը եւ խանգարէ օրուան խաղաղութիւնը: Առաջը առէք թիրիմացութիւններու եւ հետեւ կեցեք ջղային մարդոցմէ:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
 Ուշադիր եղէք ձեր առողջութեան, մանաւանդ խուսափեցեք օդի փոփոխութենէ կամ պարզապէս ցեղ, ինչ որ կրնայ ձեզ խանգարել եւ հանգիստ պարտադրել:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
 Օրը ունի անխորժ եւ նոյն ատեն հանելի պահեր: Ժխտակց հարցերու պարագային հանդարտ մնացեք, իսկ ուրախ ժամերուն զուարեացեք բարեկամներու կամ ձեր ընտանիքին անդամներուն հետ:

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic

ՇԵՆԱՏԵՍԻԼ

00:00.- Պատարագ

10:00.- Սապաօ
 13:00.- Մարու հանա

14:00.- Եւրոնիւզ
 14:30.- Լուրեր
 15:00.- Ֆիլմաշար
 17:30.- Կենդանի գծանկար

18:30.- Մանկական
 19:30.- Լուրեր
 20:00.- Թոթիլ ոթրոլ
 21:00.- Մեխիսա
 20:00.- Չէժէլ
 23:00.- Արարական յայտագիր

15:00.- Թ.Վ.Ի.
 7:15.- Բիլիս
 7:30.- Թ.Վ.Ի. մարէն

08:30.- Մինի սթիւտիո
 09:30.- Վիտէօ կլաւ
 10:30.- Բի Ե Բի
 12:45.- Էն. Պի. Էյ. Էքքըն
 13:30.- Էն. Թ.Վ.Ի. սփորթ

14:00.- Ժուրնալ Ֆրանսա 2
 14:30.- Սի. Էն. Էն. Ի լուրեր
 15:00.- Աղանի Աղանի
 16:00.- Մինի սթիւտիո
 18:00.- Թ.Վ.Ի. Վի.
 19:00.- Սինէ սինէֆիլ
 20:00.- Արարական լուրեր
 20:30.- Հայաս
 22:45.- Էն. Թ.Վ.Ի. սփորթ

23:00.- Տիվերթիզման

15:00.- Պ.Վ.Է.
 15:00.- Լուրեր
 16:00.- Այա մաշարէֆ ալ քարն

17:00.- Տնտեսական
 17:30.- Սինեմա / 35mm
 18:00.- Արաբ. յայտագիր
 18:45.- Սիւսիս
 19:00.- Լուրեր
 20:00.- Լիքս սիւսիս
 20:30.- Շարժապատկեր
 21:30.- Ուստոն
 22:00.- Այ մասիլեա
 23:00.- Տարբեր ալ տաու
 23:30.- Մարպական լուրեր
 00:00.- Լուրեր

15:00.- Թ.Վ.Ի.
 7:30.- Էքքարթ
 8:00.- Թոն Էստի ձերի

08:30.- Մանկական ծապաւէն

10:00.- Լուրեր
 13:30.- Սուրիական ֆիլմաշար

14:30.- Լուրեր
 15:00.- Մանկական յայտագիր

15:30.- Կենդանի գծանկար
 16:30.- Մոկի
 17:00.- Բիլի Ելիֆ
 19:00.- Վիտէօ ֆէշըն
 19:30.- Լուրեր
 20:30.- Պէս սէլըր
 21:30.- Տեղական յայտագիր

23:00.- Ամերիկեան ծապաւէն

00:00.- Մտարագ

7:00.- Լուրեր
 9:00.- Այա Այ Սապաօ

13:00.- Ֆիլմ Ինֆօ
 13:05.- Տիլի ուրլոտ
 15:00.- Լուրեր
 15:30.- Նրս տարիքա
 16:30.- Ֆուրպոլ
 18:30.- Մարպական
 19:00.- Այ ֆախ
 20:00.- Արարական լուրեր
 20:30.- Ռուսում մուրահարիրա

20:35.- Լէյլէթ Ուսս
 22:30.- Միլիթրանա
 23:30.- Այ ֆախ

15:00.- Պերլիոպ.
 «Ֆանտաստիկ սիմֆոնիա»
 13:00.- Հեռուստաներկայացում «Վտարանդիները»
 15:00.- Հայլուր
 15:20.- Մուլտաներկայ «Պատկերապարդ պատմութիւններ Աստուածաշնչից»
 15:50.- Ալկրո - TV
 16:10.- Բարի ախորժակ
 16:30.- Երեկոյեան Երեւան
 16:40.- Խորան լուսոյ
 16:50.- «Քաղցր կինը»
 18:35.- Տուն - տունիկ
 19:00.- Հայլուր
 19:50.- Չիւնոժ
 20:25.- «100 կրամ՝ ի պետս քաջութեան»
 22:00.- Հայլուր
 22:20.- Երեկոյեան Երեւան
 21:40.- Փաստագրական ֆիլմ՝ «Արագած»
 23:10.- Հեռուստաներկայացում «Վտարանդիները»
 02:00.- Պերլիոպ.
 «Ֆանտաստիկ սիմֆոնիա»
 03:20.- Մուլտաներկայ «Պատկերապարդ պատմութիւններ Աստուածաշնչից»
 03:45.- Գանի, մի պատմութիւն պատմիր
 04:00.- Հեռուստաներկայ «Պայնրոյի Այրիկ»
 04:50.- Երեկոյեան Երեւան
 05:00.- Հեռուստաներկայացում «Վտարանդիները»

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակա կըրնան ըլլալ որչափ փոփոխութիւններու:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5129

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՐՈՂՈՒՄ

1. Դայլայիկ:
 2. Բանականութիւն - Արեւմտեան Հայաստանի լեռներէն:
 3. Կրկնուած բաղաձայններ - Կապոյտ ներկանիւթ - Այրուրեանէն:
 4. Մարտի, անուշաբոյր տունիկ - Անաւարտ:
 5. Ժխտակց մասնիկ - Խալիս - Մարտի կոնդ:
 6. Մօր առաջին կաթը - Մեծ մայր - Յանձնել:
 7. Արեւելեան եփրատ:
 8. Զրային թռչուն - Անկան:
 9. Լեռնային կիլիկիոյ բերդաբաղաձայններէն:
 10. Բթամատի եւ ցուցամատի բացուածքի չափ - Նմանաձայն գիրեր:
 11. Պարտասակ - Ինքնակալ:


1. Իրագործել, կիրարկել:
 2. Ցամաքամաս մը - Արեւմտի Հայրը:
 3. Կրկնուած բաղաձայններ - Լ. Ղ. Հանրապետութեան նախկին կարգափոխակ:
 4. Ոտնակապ - Հայ տղայ:
 5. Լալկան կին:
 6. Հնձուած ու չորցուած խոտ - Մէկը:
 7. Հայկական ամիսներու 17րդ օրը - Բառային կցորդ:
 8. Տիգրեանկան Ա. Ժողովին գումարման վայրը - Այրուրեանէն - Չայնանի:
 9. Տեղափոխուած գիրեր - Անկեղծօրէն:
 10. Թանկարժէք բար:
 11. Անքուն մնացած - Լեզուն - Իշխանաւոր:

ԹԻԻ 5128

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Խ	Լ	Ս	Ե	Ս	Ե	Խ	Լ	Ս	Ե
2	Լ	Ս	Ե	Ս	Ե	Խ	Լ	Ս	Ե	Ս
3	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
4	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
5	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս
6	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս
7	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
8	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
9	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
10	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե
11	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե	Ս	Ե



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԵՍ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ

Լիբանանի պասեթպոլի տղոց ախոյեանութեան աւարտական ճակատումին չորրորդ մրցումին, Սա- ժէս, երէկ 107-92 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ռիատին, վեցերորդ անգամ ըլլալով հանդիսա- ցաւ Լիբանանի ախոյեան:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ Հ.Մ.Ը.Մ. - ՍԱԼԱՍ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 22րդ հանգրուանի բացման մրցումներուն, երէկ երեկոյ- եան տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնց ըն- թացքին Հ.Մ.Մ. եւ Աճտ յաղթանակներ արձանագրե- ցին, յաջորդաբար պարտութեան մատնելով Պրըփը (1-0) եւ ԱՆԻ Մայտան (2-1):

Դասաւորումը թէեւ փոփոխութիւն չկրեց, սակայն յաղթական երկու կազմերը աւելիով մօտեցան Յրդ դիրքը գրաւող Անսարի, որ այսօր կը մրցի Ռասիկի դէմ: Անսար ունի 27 կէտ, Աճտ՝ 26, իսկ Հ.Մ.Մ.՝ 22: Վաղը՝ Կիրակի, Պուրճ Զամուտի Բաղաբապետա- րանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայա- ցուցչական խումբը, ժամը 4:30ին կը հիւրընկալէ Սա- լասը: Հիւսիսի կազմը 31 կէտով կը գրաւէ դասաւոր- ման ճրդ դիրքը, իսկ Հ.Մ.Ը.Մ. 8 կէտով՝ նախաձեռնի դիրքը:

22րդ հանգրուանի գագաթի ճակատումը տեղի կ'ունենայ այսօր, Պէյրուսի Բաղաբապետարանի դաշտին վրայ, ուր պարագլուխի դիրքը գրաւող Նըթ- մէ իր դէմ կ'ունենայ երրորդ դիրքը գրաւող Թատա- մոն Սուրը:

Ստորեւ՝ այսօրուան եւ վաղուան մրցումներուն յայտագիրը:

Table with 3 columns: Մրցում (Match), Ժամ (Time), Դաշտ (Venue). Rows include ԱՅՍՕՐ, Սաժէս - Ալսա Ալէյ, Թատամոն Սուր - Նըթմէ, Թասիկ - Անսար, ՎԱՂԸ, Հ.Մ.Ը.Մ. - Սալաս, Սաֆա - Շապապ Սահէլ.

ՔԱԼՉԻՕ

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ - Ա. ԷՍ. ՌՈՍԱ՝ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 32րդ հանգրուանի մրցումներուն, ախո- ղոսին համար պայքարող երեք խումբերը՝ Ինթէր Միլան (առաջին), Ա. էս. Ռոմա (2րդ) եւ Եուվեթի (3րդ), յաղթանակէ ալլընտրանք չունին, այ- լայպէս մնացեալ երկու հանգրուաններուն անոնք կրնան զժողարու- թիւններու առջեւ գտնուիլ, որովհետեւ անոնց միջեւ կէտերու տարբերութիւնը բաւա- կան մօտ է:

Շ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՍ

ՊԱՍԵԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շարաթաձեռնին, Լ. եւ Ս. Յակոբեան քոչէճի դաշ- տին վրայ տեղի կ'ունենան Շ. Մ. Ը. Մ.ի ԼԵՎԱՍի յանձնախումբին կողմէ կազմակերպուած պասեթ- պոլի մրցումները, ստորեւ տրուած յայտագիրին հի- մամբ:

Շարաթ օրուան մրցումները տեղի կ'ունենան կէ- սորուան ժամը 12:00էն սկսեալ, իսկ Կիրակի օրուան մրցումները՝ կէսօրէ առաջ ժամը 11:00էն սկսեալ:

Table with 3 columns: Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը (Below are the match schedule), ՇՄԸՄ, Մ. Խանամիրեան, Մեքուպեան (միջակ աղջիկներ) 12:00ին, Գ. Կիրակեան (Ս. Խաչ) (միջակ տղաք) 1:00ին, Լ. եւ Ս. Յակոբեան, Դ. Կիրակեան (մեծ տղաք) 2:00ին, Թորոսեան, Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք) 3:00ին, Կ. Բ. Վ., Նուպարեան - Խրիմեան (մեծ տղաք) 4:00ին, Հայ Աւետ. քոյէն (Այնճար) - Քաղաքի Հայ Աւետ. քոյէն (մեծ տղաք) 5:00ին, Ճեմարան - Շամլեան-Թարիկեան (մեծ աղջիկներ) 6:00ին, Ս. Հոյիփսիմեանց - Շամլեան-Թարիկեան (մեծ տղաք) 7:00ին, ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ, Ս. Քասախից Մանկանց - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ տղաք) 11:00ին, Ս. Խանամիրեան - Գ. Կիրակեան (Յառաջ) (միջակ տղաք) 12:00ին, Գ. Կիրակեան (Յառաջ) - Մեքուպեան (մեծ աղջիկներ) 1:00ին, Ս. Հոյիփսիմեանց - Ս. Խանամիրեան (միջակ աղջիկներ) 2:00ին, Նուպարեան - Խրիմեան - Մեքուպեան (միջակ աղջիկներ) 3:00ին, Ս. Հոյիփսիմեանց - Ճեմարան (մեծ տղաք) 4:00ին, Կ. Բ. Վ. - Դ. Կիրակեան (մեծ տղաք) 5:00ին, Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ Աւետ. քոյէն (մեծ տղաք) 7:00ին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔ

«ՓԻՆԻԿ» ԵՐԵՒԱՆ ԵՒ «ՇԻՐԱԿ» ԳԻՒՄՐԻ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Հայաստանի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին քա- ոորդ աւարտականի երթի մրցումներուն, երէկ տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնց ընթացքին «Փինիկ» Երեւան եւ «Շիրակ» Գիւմրի յաղթանակ- ներ արձանագրեցին: Առաջինը 2-1 արդիւնքով պար- տութեան մատնեց «Բանանց» Երեւանը, իսկ երկրոր- դը՝ «Միքա» Աշտարակը (1-0):

Քառորդ աւարտականի երթի մնացեալ երկու ճա- կատումները տեղի կ'ունենան այսօր, իսկ դարձի մրցումները՝ Ապրիլ 26ին եւ 27ին:

ՄՊԱՆԻՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ ՎԱԼԵՆՍԻԱ - ՏԵՓՈՐԹԻՒՅՈ ՔՈՐՈՒՆԱ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 35րդ հանգր- ւանի մրցումներուն, այսօր Ռէալ Մատրիտ կրնայ գրաւել պարագլուխի դիրքը, երբ պարտութեան մատ- նէ իր հիւրը, վերջին դիրքը գրաւող Թեներիֆէն: Մայ- րաքաղաքի կազմը, որ այժմ մէկ կէտով ետ կը մնայ Վալենսիայէն, իսկ մէկ կէտի առաւելութիւն մը ունի Յրդ դիրքը գրաւող Տեփորթիօ Քորուսի վրայ, պի- տի սպաս վաղը՝ Կիրակի անոնց երկուքին միջեւ տե- ղի ունենալիք մրցումին:

Վալենսիա եթէ յաջողի պարտութեան մատնել իր հիւրը՝ Լա Քորուսին, կարելի քայլ մը առած պիտի ըլլայ դէպի տիտղոս, որուն վերջին անգամ տիրացած էր 30 տարի առաջ:

Պարսելոնա, որ այսօր պիտի այցելէ Սելթա Վիկոյի դաշտը (5րդ), նոյնիսկ յաղթանակի մը պարագային, պիտի մնայ չորրորդ դիրքին վրայ:

Ստորեւ՝ 35րդ հանգրուանի մրցումներուն յայտա- գիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամանակացոյցով):

Table with 3 columns: Մրցում (Match), Ժամ (Time), Դաշտ (Venue). Rows include Սելթա Վիկո - Պարսելոնա, Ռէալ Մատրիտ - Թեներիֆէ, Լաս Փայմաս - Ռայօ Վալեքանս, ՎԱՂԸ, Ալաւես - Ռէալ Սարալիս, Աթլետիքո Պիլաո - Սելիլյա, Էսփանիոլ - Վիտորիա, Մալկան - Մայորքա, Ռէալ Պեթիս - Ռէալ Սոսիէտատ, Ռէալ Վալադոլիտ - Օսասունա, Վալենսիա - Տեփորթիօ Քորուսա.

ԱՅՍՕՐ՝ ՊՈՐՏՕ - ԼՕՐԻՍ

Այսօր Շարաթ, Ֆրանսայի ֆուտբոլի Լիկայի բաժակի մրցաշարքին աւարտականի տեղի ու- նենալիք մրցումին նա- խօրեակին, Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիո- նին 92 անդամները երէկ ներկայացուցին իրենց հրաժարականը, իբրեւ բո- յոյք ֆետերասիոնին նա- խագահին ժերար Պուր- կոնիի դէմ, որ վերջերս շահած էր թշնամութիւնը շատ մը մարպիչներու, մարպիչներու եւ ակումբի պատասխանատուներու:

Իրենց կատարած այս քայլով, անոնք պիտի փորձեն պարտադրել Ժե- րարի, որ ներկայացնէ իր հրաժարականը, այլուպէս կ'ակնկալուի, որ նոր նա- խագահի մը ընտրու- թիւնը տեղի ունենայ յա- նաջիայ Մայիս 29ին, Քաննի մէջ:

Միւս կողմէ, «Սթատ Տը Ֆրանս»-ի մէջ տեղի կ'ու- նենայ Պորտօ - Լորիան ճակատումը, ժամը 21:45ին: Առաջինը կը գրաւէ ընդհանուր դասա- տրման ճրդ դիրքը, մինչ երկրորդը՝ 18րդ եւ վեր- ջին դիրքը:

Լորիան, որ գրեթէ փո- յադրուած կը նկատուի Բ. դասակարգ, կ'ակնկալէ 2001-2002 եղանակը աւարտել բաժակի մը տի- րանալով: Անկա յոյս մը եւս ունի յառաջիկայ եղա- նակին եւու. Է. Է. Ֆ. Ա. ի ֆու- ֆուտբոլի մրցաշարքին մաս- նակցելու, որովհետեւ յա- նաջիկայ Մայիս 11ին Պասթիայի դէմ մրցում մը ունի կատարելիք (Ֆրանս- սայի ֆուտբոլի բաժակի աւարտական):

Շարաթաձեռնի տեղի պիտի ունենայ այլ մրցում մըն ալ՝ Սթատի եւ Օքսէ- ռի միջեւ, յետաձգուած՝ 20րդ հանգրուանէն: Մրցումը պիտի կատար- ւի ժամը 19:30ին, Պէյրու- թի ժամով: Ա. դասակարգին մաս կազմող մնացեալ 14 խումբերը, շարաթաձեռ- ջին մրցում չունին կատա- րելիք:

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ - ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ. 65-6 Մայիս Սար մրիտ, Զարրու Լարաքիա, մախանջ եւ ճաշ 18\$, Հայաստան համահայկական Բ. ժողով 24 31 Մայիս 475\$, 29 Մայիս Հայաստան, Սեւան, Արզնի 21 օր պտոյտ- Օնրով, վրագ, տուրք, օդանաւի տոմս 399, 455, 555, 780\$, Ապրիլ 22էն սկսեալ աճեմ առուու եւ իրիկուն մեր Գրա- սեմեակի առջեւն դէպի Հայկա, Դամասկոս, Լարաքիա, Սոր օգորայնորով, միայն 6\$, օժտուած՝ T. V./ Tel./ W. C. ԱՃՃԵԱՆ Թուրք 01/261177 03 233978

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՎԱՉԵ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ Համալսարանական Կրթաթոշակ 2002-2003 Տարեշրջան

- 1. Մանուկեան Բարեսիրական Հիմնարկութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Համալսարանական Կրթաթոշակի յատկացումներու բաժանմունքը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին համար պիտի յատկացնէ որոշ թիւով կրթաթոշակներ մախիկն եւ ճոր արժանաւոր ուսանողներու եւ թեկնածուներու: 2. Հիմնարկութեան ծրագիրը կը վերաբերի միմիայն այն ուսանողներուն, որոնք համալսարա- նական լրիւ մակարդակ ունեցող ուսումնասիրա- կան հաստատութիւն մը պիտի յաճախեն կանոնա- տր կերպով: 3. Թեկնածուները պարտին ունենալ ուսումնա- կան բարձր մակարդակ եւ ընդունուած ըլլալ նուա- զագոյնը Sophomore դասարանը՝ ամերիկեան հա- մալսարաններուն մէջ, կամ համապատասխան դա- սարան մը՝ այլ համալսարաններու պարագային: 4. Մանուկեան Համալսարանական կրթաթո- շակ ստացող թուր մախիկն ուսանողները, ինչպէս նաեւ ճոր թեկնածուները պարտին ներկայանալ հիմնարկութեան գրասենակը՝ 15 Ապրիլէն 20 Մայիս (բացի Շարաթ օրերէն), կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ կէսօրը ետք ժամը 5:00, ստորեւ յիշուած հասցեին, ստանալու համար կրթաթոշակի դիմումագիրը: ՎԱՍԵ. - Ժէլ Էլ Տիպ հրապարակ, «Մալլահ» Սենթըր, Տրդ յարկ, հեռաձայն՝ 04-713532:

ԼԵՒՈՒ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՔՈԼԵԾ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի կազմակերպած վիճակահանութեան շահող թիւն է 8245: Բախտաւորէն կը խնդրենք ներկայանալ դպրոց ստանալու համար Sergio Albertini հաստատու- րեան կողմէ նուիրուած աղանձադակու ժամացոյ- ցը: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱՆՈՅ Հովանաւորութեամբ՝ ՈՒԱԼԻՏ ԴԸԼՄԻԵԻ Լիբանանի երաժշտանոցի տնօրէն Կը ներկայացնէ «ԱՇԴԱՐ ԵՌԵԱԿ»-ը Մասնակցութեամբ՝ ԻԶՎՊԵԼ ԳԱՅԱԵԱՆԻ (դաշնակ) ԺՈԼԹ ՅԻԿԵԹԻ (քլարիներ) ԹԵՍԻ ՍԵԼԵՍԻ (վիոլա) Յայտագիր՝ Զուլման, Սաժէ, Կոմիտաս, Տը Ֆալա, Խաչատուրեան Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002ին երեկոյեան ժամը 8:00ին, Ֆրանսական համալսա- րանի մշակութային կեդրոնի, «Փիեա Ապու Նաթըր» ամփիթատրոնին մէջ: ՇՐՄԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈԼԵԾ ՏԻԿՆԱՆՅ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ Համարաձեռնութեամբ Մայրերու Օրուան զոյգադիմացումը ԴԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ - Այցելուիճիճ՝ Ուաքայի եւ Հարտիմիի սրբատեղիները - Ճաշ՝ «Դապաթ ալ Ուատի» ճաշարան ՀԻՆԳՇԱՐԹԻ, 9 ՄԱՅԻՍ 2002 Մեկնում՝ առաւօտեան ժամը 8:00ին վարձա- րանէ: Վերադառնալ՝ ժամը 5:00ին շուրջ վար- ժարան: ՕՍԱԿ՝ 25,000 Լ. Ո. ●ՅԵՆ 12 տարեկան փոքրերուն համար՝ 15,000 Լ. Ո.

ՃԱՏՐԱԿ ՆԵՏԵՎ Թ. - ՊՈԿԱՆԱԿԱՅԵԻ Վ. (2002) ՇԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ ԵՆԵՎ Թ. - ՆԵՍՊԱՆԵՓ. (2002) ՇԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ ՎԵԼԻՍԻՐՈՎԻՉ Տ. - ԵՐՄԵԼՈՒԿ Ի. (2002) ՇԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՄԱՂՍ ԵՒ ՍԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ ՃՈՏԱՆՍԸԼ Լ. - ՍԵԼՎԸՍԸԼ Պ. (2002) ԽՆՊԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄ ԵՆԱՆԵՂ՝ 10րդ հշ Այս սինակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

